

6976

ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ.

16

ՀԱՍՏԱՆԻՈՒԹԵՆՍԿԱՆ
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ (Բ)
ԿՈՆՑԵՐԵՆՑԻԱՆ



ԲԱՆԱԶԵՎԵՐԸ

ՅԵՎ

ԿՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ



3K02
2-22



Ձ Ա Կ Կ Ն Ի Գ

17.09.2013

6976

3 ՀՈՂ
2-22

20 JAN 2006
ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ.

1 DEC 2009

№ 16

ՀԱՄԱՐԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ (Բ)
ԿՈՆՓԵՐԵՆՑԻԱՆ

1005
2237a

ԲԱՆԱԶԵՎԵՐՐ

ՅԵՎ

ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐՐ



Հ. Ա. Կ. Կ. Ի. Գ. Ա.
1929

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑ-
ՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ

I.

1) Լսելով գեկուցումները Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն՝ Ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանի մասին, համաձայնությամբ հանդիսանալով XVI կուսկոնֆերնցիան ընդգծում է, նախ, վոր հնգամյա պլանը ժողովրդական տնտեսության ընդհանուր անման վերաբերմամբ նախատեսում է հետևյալ նվաճումները.

ա) Այն պահին, յերբ հիմնական ներդրումների ընդհանուր գումարը 1923-24—1927-28 թվականների հնգամյակում կազմում էր 26,5 միլիարդ ռուբլի, 1928-29—1932-33 թ. թ. հնգամյակի համար հիմնական ներդրումների չափն ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ վորոշված է հասցնել 64,6 միլիարդ ռուբլու: Այն պահին, յերբ անցած հնգամյակի ընթացքում հիմնական ներդրումներն արդյունագործության մեջ կազմում էին 4,4 միլիարդ ռուբլի, նախագծվող հնգամյակի համար նրանց գումարը պիտի հասնի 16,4 միլիարդ ռուբլու. համապատասխան թվերը գյուղական տնտեսության համար կազմում են 15 միլիարդ ռուբլի և

23,2 միլիարդ ուրբլի. տրանսպորտի համար 2,7 միլիարդ ուրբ. ու 10 միլիարդ ուրբլի և ելեքտրիֆիկացիայի համար՝ 0,9 միլիարդ ուրբլի ու 3,1 միլիարդ ուրբլի:

բ) Այս ներդրումների հետևանքով յերկրի հիմնական ֆոնդերի ընդհանուր գումարը 1927-28 թվի 70 միլիարդ ուրբլուց աճում համնում է մինչև 128 միլիարդ ուրբլու 1932-33 թ., այսինքն 82 տոկոսով ավելի, այդ թվի մեջ նաև ամբողջ արդյունագործության հիմնական ֆոնդերը՝ 9,2 միլիարդից մինչև 23,1 միլիարդ ուրբլու, ելեքտրիֆիկացիայինը՝ 1 միլիարդ ուրբլուց մինչև 5 միլիարդ ուրբլու, այսինքն 5 անգամ ավելի, յերկաթուղային տրանսպորտինը՝ 10 միլիարդ ուրբլուց մինչև 17 միլիարդի, այսինքն 70 տոկոսով ավելի, և գյուղական տնտեսությանը, 28,7 միլիարդ ուրբլուց մինչև 38,9 միլիարդ ուրբլու, այսինքն 35 տոկոսով ավելի:

գ) Հիմնական ներդրումների այդ հսկայական ծավալը տալիս է նաև արտադրության համապատասխան աճում ամբողջ արդյունագործության մեջ 1927-28 թ. 18,3 միլիարդ ուրբլուց մինչև 43,2 միլիարդ ուրբլի 1932-33 թվին, վորը նշանակում է արդյունագործական արտադրության մինչպատերազմյան չափերի ավելի, քան յեռապատիկը: Գյուղական տնտեսության մեջ—16,6 միլիարդ ուրբլուց մինչև 25,8 միլիարդ ուրբլի, վորը նշանակում է, թե գյուղատնտեսական արտադրության մինչպատերազմյան չափերից գերազանցում է ավելի, քան մեկ ու կես անգամ: Յերկաթուղիների աշխատանքն աճում է 88 միլիարդ տոնն-կիլոմետրից մինչև 163 միլիարդ տոնն-կիլոմետր: Ամբողջ ժողովրդական տնտեսության (ըստ ֆիզիքական ծավալի) զուտ արտադրանքը—24,4 միլիարդ ուրբլուց մինչև 49,7 միլիարդ ուրբլի:

դ) Յեղնելով յերկրի ինդուստրացման, Միության պաշտպանունակության ամրացման և կապիտալիստական յերկրներից կախում ունենալու գրությունից ազատվելու ընդհա-

նուր գաղափարից, արդյունագործության մեջ դրվող կապիտալներն ուղղված են առավելապես արտադրության միջոցներ պատրաստող արդյունագործության համար (արդյունագործության մեջ դրված բոլոր կապիտալների 78 տոկոսը), վորի համեմատ արդյունագործության այդ ճյուղերի արտադրությունն էլ աճում է բավական արագ. այն պահին, յերբ ծրագրվող արդյունագործության ընդհանուր արտադրանքն աճում է 2,8 անգամ, արտադրության միջոցներ պատրաստող ճյուղերի ընդհանուր արտադրանքը մեծանում է 3,3 անգամ:

Ելեքտրոշինարարության բնագավառում պլանը նախատեսում է 42 ռայոնական ելեքտրոցենտրալների կառուցում (Դնեպրի հիդրոկայանը, Սվիրի հիդրոկայանը, մի ելեքտրոկայան Մ. Վիշերի տորֆով, Մոսկվայի մոտ՝ Բոբրիկում, Ջուլիինը՝ Դոնավազանում և այլն և այլն): Այս հսկայական շինարարությունը հնգամյակի վերջում պետք է մեծացնի ստացվող ելեքտրական եներգիայի քանակը 5 միլիարդ կիլովատ-ժամից ու հասցնի մինչև 22 միլիարդ կիլովատ-ժամի:

Սև մետաղագործության բնագավառում յենթադրվում է կառուցել նոր հզոր մետաղագործական գործարաններ (Մազնիտոգորի, Տելբսի, Դնեպրի, Կրիվորոժի և այլն): Նոր գործարանների կառուցումը և արդեն գործողների վերակառուցումը չուգունի արտադրությունը պիտի հասցնի $3^{1/2}$ միլիոն տոնից մինչև 10 միլիոն տոննի 1932-33 թվին:

Քարածխի բնագավառում ծրագրվում է հանքահորային հզոր շինարարություն թե Դոնավազանում և թե Ուրալում, Կուզավազանում ու Մերձմոսկովյան ավազանում, և քարածխի հայթայթումը 1927-28 թվի 35 միլիոնից պետք է հասցվի 75 միլիոն տոննի 1932-33 թվին:

Վերակառուցումներն ու նոր գործարանների կառուցումը մեքենաշինարարության բնագավառում (ավտոմոբիլի

գործարան, տրակտորային գործարաններ Ստալինգրադում և Ուրալում, ծանր մեքենաշինարարություն Սվեյդլովի գործարանը, գյուղատնտեսական մեքենաշինարարության Ռոստովի գործարանը, գործիքներ պատրաստող գործարաններ և այլն, և այլն) հնարավորություն են տալիս ընդգծելու մեքենաշինարարական արդյունագործության ընդհանուր արտադրության աճումը 3¹/₂ անգամ, իսկ գյուղատնտեսական մեքենաշինարարության արտադրությունը՝ 4 անգամ:

Քիմիական արդյունագործության բնագավառում տեղի պիտի ունենան քիմիական կոմբինատների կառուցումներ (Բերեզնյակովի, Մոսկվայինը Յեգորևի Ֆոսֆորիտներում, Դոնավազանում և այլն), և քիմիական պարարտանյութերի արտադրությունը 1932-33 թվին պիտի հասնի 8 միլիոն տոննայի ավելի՝ 1927-28 թվի 175 հազար տոննի դիմաց:

յե) Սորհրդային Միության տնտեսության զարգացման ծրագրված տեմպերի զգալի գերակշռումը, հաճեմատած կապիտալիստական բոլոր յերկրների հետ, արդեն հնգամյակի վերջում պետք է ելապես փոփոխի ՍՍՀՄ տեսակարար կշիռը համաշխարհային արտադրության մեջ, — չուզուցի կողմից ՍՍՀՄ վեցերորդ տեղից պետք է անցնի յերրորդ տեղը (Գերմանիայից ու Միացյալ Նահանգներից հետո), քարածխի կողմից՝ հինգերորդ տեղից չորրորդը (Միացյալ Նահանգներից, Անգլիայից և Գերմանիայից հետո):

2. Կոնֆերենցիան ընդգծում է, յերկրորդ, վոր ժողովրդական տնտեսության ընդհանուր աճումը նախատեսվում է հնգամյա պլանի կողմից սոցիալիստական սեկտորի վճռական անման ուղղությամբ քաղաքում և գյուղում ժողովրդական տնտեսության կապիտալիստական տարրերի հաշվին, վորը յերևում է հետևյալ տվյալներից.

ա) Հիմնական ֆոնդերի կազմը փոխվում է (տոկոսներով ընդհանուր գումարների վերաբերմամբ տարվա վերջին).

Սեկտորներ՝	1927-28 թ.	1932-33 թ.
Պետական	51,0	63,6
Կոոպերատիվային	1,7	5,3
Մասնավոր	47,3	31,1

բ) Դրան համապատասխան փոխվում է նաև սոցիալիստական սեկտորի ընդհանուր արտադրանքի տեսակարար կշիռը.

Արդյունագործության մեջ	80 0/0	92 0/0
Գյուղական տնտեսության մեջ	2 0/0	15 0/0
Հատավաճառի շրջանառության մեջ 75 0/0		91 0/0

Աճմանը առանձին զարկ է տալիս համայնացրած սեկտորի (խորհրտնտեսությունների ու կոլտնտեսությունների) շինարարական ծրագիրը գյուղական տնտեսության մեջ: Վերջինիս համայնացրած սեկտորի ցանքսային տարածությունների աճումը 1933 թվին հասնում է մինչև 26 միլիոն հեկտարի, կազմելով ընդհանուր ցանքսային տարածության 17,5 տոկոսը, և ապահովում է 1933 թվին (նախորդող 1932 թվի բերքից, յերբ հայմանացրած սեկտորը կազմում է ամբողջ ցանքսային տարածության 13 տոկոսը) հացահատկային մշակույթների ընդհանուր արտադրության 15¹/₂ տոկոսը և ապրանքային արտադրության 43 տոկոսը: Գյուղական տնտեսության անհատական սեկտորը դադարեցնում է իր թվական աճումը շնորհիվ այն հանգամանքի, վոր ծրագրվում է համայնացրած սեկտորի մեջ մտցվող բնակչության թիվը մեծացնել մինչև 20 միլիոն հոգու, վորի հետևանքով պետական խորհրտնտեսությունները (հներն ու նորերը) 1932 թվի բերքից կտան ապրանքային հացի վոչ պակաս, քան 34 միլիոն ցենտներ արտադրություն, իսկ կոլտնտեսությունները՝ վոչ պակաս, քան 50 միլիոն ցենտներ, վորը կազմում է 84 միլիոն ցենտներ, այսինքն 500 միլիոն փութ ապրանքային հացից ավելի:

4) Կոոպերացման վերելքի զգալի արդյունքները յերեւոյում են հետեւյալ համադրութիւննից.

1) Կոլտնտեսութիւնները ընդհանուր արտադրութեան բաժինը	1927-28 թ. 1 ⁰ / ₀	1932-33 թ. 11,4 ⁰ / ₀
2) Մանր կոոպերացիան արտադրութեան բաժինը մանր արդյունազորութեան ամբողջ արտադրութեան մեջ	19,4 ⁰ / ₀	53,8 ⁰ / ₀
3) Հաստիւնաւոր արտադրութեան կոոպերացումը	60,2 ⁰ / ₀	78,9 ⁰ / ₀
4) Գյուղատնտեսական կոոպերացիայի տնտեսութիւնների քանակը	9,5 միլ.	23,58 մ.
	(բոլոր տնտես. 37,5 ⁰ / ₀)	(բոլոր տնտես. 85 ⁰ / ₀).
5) Սպառնական կոոպերացիայի կողմից համախմբած բնակչութեան քանակը քաղաքում	8,7 միլ.	16,5 մ.
	փայտերեր	փայտերեր
Գյուղում	13,9 միլ.	31,8 մ.
	փայտերեր.	փայտերեր.

Սոցիալիստական տարրերի այս զգալի ուժեղացումն ամբողջ ժողովրդական տնտեսութեան, արտադրութեան և ապրանքաշրջանառութեան մեջ մեքենա-տրակտորային կայանների ցանցի զարգացմամբ և կոնտրակտացիայի լայն կիրառմամբ, վորը հնգամյակի վերջում պիտի ընդգրկի հասանալիկային մշակութիւնների 85⁰/₀-ը, ցույց է տալիս բանավոր դասակարգի զեկավար զերի ուժեղացումը և ստեղծում է քաղաքի ու գյուղի կապի, սմիչկայինոր ձև, վորը տանում է զեպի գյուղական տնտեսութեան մասսայական վերակազմութիւնը բարձր տեխնիկայի և կոլեկտիվացման հիման վրայ:

3) Կոնֆերենցիան ընդգծում է, յերրորդ, վոր՝

ա) ժողովրդական յեկամուտը աճում է անփոփոխ գներով 1927-28 թվի 24,4 միլարդ ռուբլուց մինչև 49,7 միլարդ ռուբլու, այսինքն 103 տոկոսով ավելի: Դա տալիս է ժողովրդական յեկամտի տարեկան աճում 12 տոկոսից ավելի, այսինքն մի տեմպով, վորը 4 անգամից ավելի գերազանցում է մինչպատերազմյան Ռուսաստանի ժողովրդական յեկամտի աճմանը և կտրուկ կերպով գերակշռում է բոլոր կապիտալիստական յերկրների տեմպից:

բ) ժողովրդական յեկամտի սոցիալական կազմն ամենից առաջ բնութագրում է արդյունազորական բանվորների ռեալ աշխատավարձի բարձրացումը հնգամյակի վերջում 71 տոկոսով, միաժամանակ ամբողջ բանվոր դասակարգի յեկամտի սեսակարար կշիռը ժողովրդական տնտեսութեան ամբողջ յեկամտի վերաբերմամբ բարձրանում է 32,1 տոկոսից մինչև 37 տոկոսի: Իսկ ամբողջ յերկրագործական բնակչութեան յեկամուտներն աճում են հնգամյակի վերջում 67⁰/₀-ով, յերբ արդյունազորութեան ուժեղ աճման շնորհիվ այդ յեկամուտների տեսակարար կշիռը վորքանում է ամբողջ ժողովրդական յեկամտի մեջ 49,8 տոկոսից ու հասնում մինչև 42,5 տոկոսի:

գ) Միացյալ բյուջեյի աճումը (նիտտո) բնորոշվում է նրանով, վոր բյուջեյի ընդհանուր գումարը առաջվա հընգամյակում կկազմի 51 միլիարդ ռուբլի՝ անցած հնգամյակի 19 միլիարդի դիմաց (166,7 տոկոս աճում): Ժողովրդական յեկամտի վերաբերմամբ 1932—33 թվին բյուջեն կկազմի 30,9 տոկոս՝ 1928—29 թվի 25,9 տոկոսի դիմաց: Բյուջեյի այս աճումը, յերկրի պաշտպանունակութեան ամրապնդման հետ միասին, հնարավորութիւն է տալիս մեծացնել ժողովրդական տնտեսութեանը հատկացրած գումարները առաջիկա հնգամյակում գրեթէ 4 անգամ ավելի (393 տոկոս)՝ անցած հնգամյակի համեմատութեամբ, և մեծացնել սոցիալ-կուլ-

տուրական ծախսերը գրեթե յերեք անգամ ավելի (276 տոկոս):

դ) Հնգամյա պլանը նախատեսում է զգալի աճում թե՛ ապրանքային և թե՛ վալյուտային ռեզերվների:

II.

Յեղնելով վերը առաջ բերած տվյալներից հնգամյա պլանի մասին և ուշադրութեան արժանի աչքով այն հանգամանքը, վոր այդ պլանը լիովին ապահովում է՝

ա) արտադրութեան միջոցների արտադրութեան, վորպես յերկրի ինդուստրացման հիմքի մաքսիմալ զարգացումը:

բ) սոցիալիստական սեկտորի վճռական ուժեղացումը քաղաքում և գյուղում ժողովրդական տնտեսութեան մեջ կապիտալիստական տարրերի հաշվին, գյուղացիութեան միլիոնավոր մասսաների դրավումը սոցիալիստական շինարարութեան մեջ կոոպերատիվային հասարակայնութեան և կոլլեկտիվ աշխատանքի հիման վրա և չքավոր-միջակ անհատական տնտեսութեաններին ամեն կերպ ցույց տրվող ոգնութեանը նրանց պայքարում կուլակային շահագործութեան դեմ:

գ) գյուղական տնտեսութեան չափազանց յետամնացութեան վերացումը արդյունադործութեանից և հացահատկային խնդրի հիմնական լուծումը:

դ) բանվոր դասակարգի և գյուղի աշխատավոր մասսաների նյութական ու կուլտուրական մակարդակի զգալի բարձրացումը:

յե) բանվոր դասակարգի ղեկավար դերի ամրապնդումը մերձեցման նոր ձևերի զարգացման հիմքի վրա՝ գյուղացիութեան հիմնական մասսաների հետ:

զ) պրոլետարական դիկտատուրայի տնտեսական և քաղաքական դիրքերի ամրապնդումը՝ դասակարգային թըշ-

նամիների դեմ ունեցած նրա պայքարի մեջ թե՛ յերկրի ներսում և թե՛ դրսում:

ե) ազգային հանրապետութեանների և յետամնաց ույունների ու մարդերի տնտեսական ու կուլտուրական վերելքը:

ը) յերկրի պաշտպանունակութեան զգալի ամրապնդումը:

թ) հառաջդիմական խոշոր քայլը կուսակցութեան լոզունգի իրականացման գործում—հասնել ու անցնել տեխնիկական-տնտեսական տեսակետից առաջավոր կապիտալիստական յերկրներից,—

կոնֆերենցիան վորոշում է հավանութեան տալ Պետական պլանային հանձնաժողովի հնգամյա պլանին, հաստատված ՍՍՀ Միութեան ժողովրդական կոմիսարների Սորհրդի կողմից, մի պլանի, վորը լիովին համապատասխանում է կուսակցութեան XV համագումարի ցուցմունքներին:

III

Հնգամյա պլանի իրականացումը, վորը հանդիսանում է ծավալուն սոցիալիստական հարձակման մի ծրագիր, կապված է ներքին և արտաքին ահազին դժվարութեանների հաղթահարման հետ: Այդ դժվարութեանները բղխում են հենց իրեն՝ պլանի լարվածութեանից, պայմանավորված յերկրի տեխնիկական-տնտեսական յետամնացութեամբ, բազմամիլիոն ցրված գյուղացիական տնտեսութեանների վերակառուցման խնդրի բարդութեանից կոլլեկտիվ աշխատանքի հիման վրա, վերջապես, մեր յերկրի կապիտալիստական շըրջափակման պարագայից: Այս դժվարութեանները կրկնապատկվում են դասակարգային պայքարի սրումով և կապիտալիստական տարրերի դիմադրութեամբ, վորոնք անխուսափելիորեն դուրս են մղվում սոցիալիստական պրոլետարիատի աճող հարձակումից:

Այդ գովարությունների հաղթահարումը հնարավոր է միմիայն աշխատանքի վորակի վճռական բարելավման և կարգ ու կանոնի տակ ընկնելու դեպքում՝ ժողովրդական տնտեսութայն բոլոր ճյուղերում: Արդյունագործական արտադրանքի ինքնարժեքի իջեցումը 35 տոկոսով հինգ տարվա ընթացքում. շինարարութայն ինքնարժեքի իջեցումը 50 տոկոսով. արդյունագործական աշխատանքի արտադրողականութայն բարձրացումը 110 տոկոսով. բերքատվութայն բարձրացումը 35 տոկոսով. ցանքսային տարածութայն ընդարձակումը 22 տոկոսով. կոլտնտեսական և խորհտնտեսական շինարարութայն ծրագրի անպայման իրագործումը. վճռական պայքարը գործալքութայն և անփութութայն դեմ արտադրութայն մեջ. աշխատանքային ղեկավարչինայի ամրապնդում. արտադրութայն սոցիալիստական ռացիոնալացումը. արդյունագործութայն և գյուղական տնտեսութայն ապահովումը ղեկավարների անհրաժեշտ բնակազմերով և կարմիր մասնագետների նոր բնակազմերի ստեղծումը բանվոր դասակարգի մարդկանցից, վերջապես, պլանային-կարգավորող սկզբունքի ուժեղացումը ժողովրդական տնտեսութայն սխտեմում, — սրանք են ընդհանուր տնտեսական կարգի տարրական պայմանները, վորոնք անհրաժեշտ են հնգամյա պլանի իրագործման գովարությունները հաղթահարելու համար:

Կոնֆերենցիան անհրաժեշտ է համարում նշել, վոր այս գովարությունների հաղթահարումը և հնգամյա պլանի իրականացումը հնարավոր է միայն ընդհանրապես աշխտավորական մասսաների և մասնավորապես բանվոր դասակարգի ակտիվութայն և կազմակերպվածութայն չափազանց մեծ աճման հիման վրա, բանվոր դասակարգի միլիոնավոր մասսաներին սոցիալիստական շինարարութայն և տնտեսութայն կառավարութայն մեջ մեծ չափերով զրավելու հիման վրա, սոցիալիստական մրցակցութայն մեծ չափերով

ծավալման և ներքևից միլիոնավոր մասսաների ինքնաքննադատութայն ուժեղ զարգացման հիման վրա՝ պետապարտի բյուրոկրատական խեղաթյուրումների դեմ:

Սոցիալիստական վերակառուցման շրջանի գովարությունները, մանավանդ դասակարգային պայքարի սրման պայմաններում, անխուսափելիորեն տատանումներ են առաջ բերում բնակչութայն մանր-բուրժուական խավերի մեջ, վորը և իր արտացոլումն է գտնում բանվոր դասակարգի մի քանի խավերում և նույնիսկ կոսակցութայն շարքերում: Այդ տատանումները, վորոնք հետևանք են մանր-բուրժուական տարերքի ազդեցութայն, իրենց արտահայտությունն են գտնում կոսակցութայն գլխավոր գծից հեռանալու մեջ հիմնական հարցերում և ամենից առաջ սոցիալիստական ինդուստրացման տեմպի հարցում, սոցիալիստական հարձակումը ծավալելու հարցում կուլակութայն և ընդհանրապես կապիտալիստական տարրերի վրա և տընտեսութայն սոցիալիստական ձևերը գյուղում ամեն կերպ ամրապնդելու հարցում:

Այդ տեսակետից տվյալ պայմաններում ամենամեծ վտանգը կոսակցութայն մեջ հանդիսանում է աջ թեքումը, վորպես բացարձակ հրաժարման արտահայտություն կոսակցութայն լենինյան քաղաքականությունից, վորպես լենինյան դիրքերի բացահայտ հանձնումի արտահայտություն դասակարգային թշնամու ճնշման տակ: Միայն անողոք հակահարվածը ամեն տեսակ տատանումներին՝ գլխավոր բողոքիկյան գիծն անցկացնելիս, վորի իրականացումն ամրապնդում է բանվոր դասակարգի և գյուղացիութայն միջև յեղած կապը, բանվոր դասակարգի ղեկավար դերի հետագա ուժեղացման հետ զուգընթաց — կարող է ապահովել սոցիալիստական շինարարութայն հնգամյա պլանի կողմից առաջադրած խնդիրների լուծումը:

կոնֆերենցիան արտահայտում է իր հաստատ վստահուած լինելը, որ կուսակցութիւնը կործանաբար հակահարված կտա վոչ միայն աջ թեքմանը, այլ և ամեն տեսակի հաշտողական տրամադրութիւններին՝ լեւինյան գծից յեղած թեքումներէ վերաբերմամբ:

Բանվորական մասսաների գլուխ կանգնած, կուսակցութիւնը վստահութեամբ առաջ կընթանա ամբողջ տնտեսութեան սոցիալիստական վերակառուցման խնդիրներն իրագործելու ուղիով և մոբիլիզացիայի կ'յնթարկի բանվոր դասակարգի ղեկավարութեամբ աշխատավորութեան լայնարձակ մասսաներին՝ հաղթահարելու զժվարութիւնները և իրակաշնացնելու տնտեսական շինարարութեան հնգամյա պլանը:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԻ ՈՒՂԻՆԵՐԸ ՅԵՎ ՄԻՋԱԿԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԹԵԹԵՎԱՑՈՒՄԸ

I.

Գյուղական տնտեսութեան վերելքի ուղիները.

1. վերականգնման շրջանի հետեանքը այն յեղով, վոր չբավոր ու միջակ գյուղացիութիւնը յուրացրեց վոչ միայն իր բաժնեհողերը, այլ և նախկին կալվածատերերի, նորան հանձնված արքունական և այն կուլակային հողերի հիմնական մասը, վոր խլվել եր կուլակներին: Միջակ գյուղացին, չնայելով գյուղում զարգացող շերտավորմանը, հետզհետե ամրացավ վորպէս յերկրագործութեան կենտրոնական դեմք: Դրա հետ միատեղ ապահովվեցին նաև չքավոր ու միջակ տնտեսութիւններն արտադրութեան միջոցներով, և բարձրացավ

նրանց հողագործական մակարդակը: Գրաստներով ապահովութիւնն ևս տարեց տարի աճում է: Գյուղացիական ցանքսերի ապահովածութիւնը գյուղատնտեսական մեքենաներով անցել է մինչպատերազմյանից: Միջգյուղական հողաշինարարութիւնն ընդգրկել է ամբողջ հողային տարածութեան մոտ $\frac{1}{3}$ մասը, իսկ ներգյուղականը՝ մոտ $\frac{1}{5}$ մասը: Բազմադաշտ ցանքսափոխութեան համար գործադրվող հողը հասել է 10 միլիոն հեկտարի: Տեսակավոր սերմերի ցանքսերը 1929 թվին կընդգրկեն հացահատիկի մշակույթների համար հատկացված ցանքսային ամբողջ տարածութեան մոտ $\frac{1}{10}$ մասը: Մի շարք տեխնիկական մշակույթներ, վորոնց ցանքսերը հեղափոխութիւնից առաջ միմիայն կալվածատերերին էյին պատկանում, հաստատուն կերպով արդեն արմատ են ձգել գյուղացիական դաշտերում (որինակ ճակնդեղը), իսկ տեխնիկական մշակույթների ցանքսերն ավելի քան 60%-ով անցել են մինչպատերազմյանից: Գյուղական տնտեսութեան ինդուստրացումն սկսվում է մեկը մյուսի յետևից նվաճել գյուղական տնտեսութեան ճյուղերը (յուղի, կանեփի, կարտոֆիլի, բանջարեղենների, մրգերի, կենդանաբուծական հում նյութի և այլ մթերքների մշակումը): Գյուղատնտեսական մեքենաների մատակարարումը 1928—29 թ. 2,25 անգամ ավելի յե մինչպատերազմյանից: Առաջին անգամ սկսում են կիրառվել հանքային պարարտանյութեր տեխնիկական մշակույթների համար հատկացված գյուղացիական դաշտերում: Գյուղատնտեսական կոոպերացիան ընդգրկել է գյուղացիական տնտեսութիւնների $\frac{1}{3}$ -ից ավելին: Տրակտորները, վորոնք մինչև հեղափոխութիւնը բոլորովին չկային գյուղացիական տնտեսութեան մեջ, տարեց-տարի ավելի ու ավելի յեն տարածվում (1928—29 թ. տրակտորներ թիվը հասնում է 36.000-ի): Աճում է տարեց տարի կոլտնտեսութիւնների թիվը (վերջին տարվա ընթացքում կոլտնտեսու-

Թյունները թիվը կրկնապատկվեց և առ 1-ն հոկտեմբերի 1928 թ. հասավ 37 հազարի) և բարելավվում և նրանց աշխատանքը: Վոտքի յե՛ն կանգնում հները և կազմակերպվում են նոր խորհրտեսուլթյուններ (խորհրտեսուլթյունների ցանքսերի տարածուլթյունն այս տարի կհասնի 1,5 միլիոն հեկտարի):


2. Սակայն, չնայելով գյուղական տնտեսուլթյունն ընդհանրապես աճում և, տեղի յե ունենում նաև գյուղական տնտեսուլթյան առանձին ճյուղերի, մանավանդ հացահատիկային ճյուղի աճման տեմպի բավականաչափ դանդաղում: Վորպես հիմք գյուղական տնտեսուլթյան զարգացման այս դանդաղ թափի և նրա չափազանց թույլ ապրանքայնուլթյան ծառայում են՝ գյուղացիական տնտեսուլթյան ցրված ու բաժան-բաժան դրուլթյունը (գյուղացիական տնտեսուլթյունների թիվը հեղափոխուլթյան ընթացքում 16-ից հասավ 25 միլիոնի), նրա կենսամլթերային բնույթը (գյուղական տնտեսուլթյան ընդհանուր ապրանքայնուլթյունը, համեմատած մինչպատերազմյանի հետ, որինակ կըրծատվել և յերկու անգամ), գյուղատնտեսական տեխնիկայի ու կուլտուրայի ցածր մակարդակը: Յեթե վերականգնման շրջանում մանր անհատական տնտեսուլթյան արագ վերելք առաջացավ, առաջին հերթին, նախկին կալվածատիրական, արքունական ու կոզակային հողերի յուրացման հաշվին, ապա վերականգնման շրջանի ավարտման ժամանակ արդեն մանր տնտեսուլթյան զարգացման և մանավանդ նրա ապրանքայնուլթյան աճման սահմանափակ հնարավորուլթյուններ են յերևան գալիս նրա տվյալ չափերի ու արտադրուլթյան յեղանակների պայմաններում: Դրա հետևանքով մեր գյուղական տնտեսուլթյունը չափազան յետ և մնում արդյունագործուլթյան զարգացման թափից, մի հանգամանք, վորը չի կարող պարենեղենի և հում նյուլթի բնագավառներում դժվարուլթյունների աղբյուր չծառայել, մա-

նավանդ յեթե նկատի առնենք հացի և հում նյուլթի պահանջի արագ աճումը:

Այստեղից առաջանում և համառ ու սխտեմատիկ աշխատանքի ծայրահեղ անհրաժեշտուլթյուն՝ վերակառուցելու գյուղական տնտեսուլթյունը և ստեղծելու յուրոր հասարակական յերկրագործուլթյուն, վորը կանգնած լինի ժամանակակից տեխնեկայի մակարդակի վրա, միաժամանակ աշակցելու չքավոր ու միջակ գյուղացիական անհատական տնտեսուլթյունների զարգացմանն ու վերելքին:

3. Սորոր գյուղատնտեսական արտադրուլթյան ստեղծումը, վորը գյուղատնտեսական աշխատանքի յետաճացուլթյունը հաղթահարելու վճռական միջոցն և հանդիսանում, կարող և տեղի ունենալ կամ յուրոր կուլակային-կապիտալիստական տնտեսուլթյան ստեղծմամբ, կամ յուրոր սոցիալիստական տնտեսուլթյան ստեղծմամբ (խորհրտեսուլթյուններ և մանր տնտեսուլթյունների համախմբումը կուլտնտեսուլթյունների, կոմմունաների, արտելների, ընկերուլթյունների մեջ և այլն): Արդյոք գյուղացիական մասսաները հավատարիմ կմնա՞ն բանվոր դասակարգի հետ կնքած միուլթյանը, թե՞ նրանք հնարավորուլթյուն կտան բուրժուազիային՝ բաժանելու իրենց բանվորներից, դա կախված և նրանից, թե ինչ ուղիով կգնա գյուղական տնտեսուլթյան զարգացումը—սոցիալիստական, թե՞ կապիտալիստական, և, դրա համեմատ՝ ո՞վ կղեկավարի տնտեսուլթյան զարգացումը—կուլակը, թե՞ սոցիալիստական պետուլթյունը: Դյուղի զարգացումը կապիտալիստական ուղիով, ինչպես ցույց և տալիս կապիտալիստական յերկըրների որինակը՝ կատեղծի գյուղում կապիտալիստական (կուլակների) ուժեղ դասակարգ, վորը միլիոնավոր մանր տնտեսուլթյունների անողոք շահագործման, նրանց քայքայելու և կլանելու հիման վրա՝ կկենտրոնացնի իր ձեռ-

500
100
100



ներում արտադրութեան միջոցները հիմնական մասսան, գյուղատնտեսական արտադրութեան հիմնական մասը:

Միանձնյա խոշոր տնտեսութիւնն ստեղծելու այս կապիտալիստական ուղիին խորհրդային իշխանութիւնը հակադրում է խոշոր հասարակական տնտեսութիւնն ստեղծելու պրոլետարական մեթոդը արտադրական կոոպերացիան, կոլլեկտիվացման միջոցով, վորը հնարավորութիւնն է տալիս ամենամանր տնտեսութեանը, խորհրդային իշխանութեան աջակցութեամբ և ղեկավարութեամբ, խոշորանալ կոլլեկտիվ աշխատանքի հիման վրա և բարձրանալ տեխնիկայի ու կուլտուրայի բարձրագույն մակարդակի վրա: Զարգացման այս ուղին, լինելով գյուղացիութեան միլիոնավոր մասսաների փրկութեան միակ միջոցը չքավորութիւնից ու քայքայումից, վոչ միայն սահմանափակում է կապիտալիստական տարրերի աճումը գյուղում, այլ և հնարավորութիւնն է տալիս, վոր խոշոր հասարակական տնտեսութիւնը (պետական ու կոլլեկտիվ) դուրս անի նրանց ասպարեզից: Կոմունիստական կուսակցութիւնն այս ղեկավարութեամբ է լինինի հետեյալ ցուցմունքներով.

«Յեթն գյուղացիական տնտեսութիւնը կարող և ավելի զարգանալ, անհրաժեշտ է հաստատուն կերպով ապահովել նաև հետագա փոխանցումը, իսկ հետագա փոխանցումն անխուսափելիորեն հանդիսանում է այն, վոր ամենից քիչ ոգտավետ և ամենից շատ յետամնաց մանր, առանձնացած գյուղացիական տնտեսութիւնն աստիճանաբար համախմբվի, կազմակերպի հասարակական, խոշոր յերկրագործական տնտեսութիւն»: (Լենին, հատ. XVIII, մասն I, էջ 189):

4. Գյուղական տնտեսութեան վերելքը արագացնելու խնդիրը վճռելիս և խոշոր հասարակական գյուղատնտեսական արտադրութիւնն ստեղծելիս, խորհրդային յերկրի զար-

գացման այժմյան շրջանում, խորհրդային իշխանութիւնն ու կոմունիստական կուսակցութիւնը հենվում են՝

ա) արդյունագործութեան արագ զարգացման և, մասնավորապես, գյուղատնտեսական մեքենաների արտադրութեան արագ աճման վրա.

բ) ժողովրդական տնտեսութեան պլանային կարգավորման վրա, վորը կապում է գյուղական տնտեսութեան զարգացումը արդյունագործութեան արագ աճման հետ.

գ) հողի ազգայնացման վրա, վորն եժանացնում է գյուղատնտեսական արտադրութեան արժեքը և հնարավորութիւնն է տալիս գյուղացուն ղետեղել արտադրութեան մեջ այն միջոցները, վորպիսիք հողի մասնավոր սեփականութեան ղեկավարում, նա ստիպված կլինել գործադրել հող գնելու համար.

դ) կապիտալիզմի աճման սխտեմատիկ սահմանափակման վրա գյուղում, վորն ազատագրելով չքավորին ու միջակին կուլակային ստրկութիւնից, հեշտացնում է նրանց տնտեսական վերելքի հնարավորութիւնը.

յե) արտադրական կոոպերացիան աճման վրա, վորը հնարավորութիւնն է տալիս մանր տնտեսութեանը արտադրական պրոցեսները համախմբման միջոցով ոգտագործել խոշոր տնտեսութեան այն առավելութիւնները, վորոնք կապիտալիստական հասարակութեան մեջ մատչելի յեն միայն կուլակներին.

զ) ազգայնացված վարկային սխտեմի և պետական բյուջեյի ամեն չափով ոգտագործման վրա՝ բարձրացնելու համար գյուղական տնտեսութիւնը.

ե) կուսակցութեան քաղաքականութեան այն պաշտպանութեան վրա, վոր ցույց են տալիս բանվոր դասակարգն ու գյուղի աշխատավորական մասսաները գյուղական տնտեսութեան վերելքի բնագավառում:

Այսպիսով, յեթն վերականգնման շրջանի ավարտման ժամանակ յերևան յեկան մանր տնտեսութիւնների հետագա

արագ աճման սահմանափակ հնարավորութիւնները, ապա միաժամանակ աճեցին թե՛ վորակով և թե՛ քանակով պրո-լետարական պետութեան ռեսուրսները, վորոնք հնարա-վորութիւն են տալիս ոգտագործել խորհրդային սիստեմի առավելութիւնները գյուղական տնտեսութեան վերելքի թափը արագացնելու համար նոր մեքենային տեխնիկայի և կոլլեկտիվ աշխատանքի հիմունքներով՝ մանր տնտեսու-թիւնների համախմբման բազայի վրա:

5. Խոշոր հասարակական տնտեսութեան զարգացումը խորհրդային յերկրում տեղի յե ունենում վոչ թե մանր տնտեսութիւնները կլանելու, ավերելու, վոչնչացնելու և քայքայելու, վոչ թե նրանց դեմ պայքար մղելու միջոցով, այլ տնտեսական վերելքի, աճման, նրանց դեպի տեխնի-կայի, կուլտուրայի և կազմակերպութեան բարձրագույն մակարդակն առաջնորդելու միջոցով: Խոշոր հասարակական տնտեսութիւնը չի հակադրվում չքավոր ու միջակ անհա-տական տնտեսութիւններին, վորպես նրանց թշնամի ույժ, այլ կապվում ե նրանց հետ, վորպես նրանց ոգնութեան աղբյուր, վորպես խոշոր տնտեսութեան առավելութեան մի որինակ, վորպես աջակցութեան կազմակերպիչ՝ նրանց խո-շոր տնտեսութեան մեջ աստիճանաբար համախմբելու գոր-ծում: Իրան համապատասխան կուսակցութիւնը տանում ե իր գործնական աշխատանքը գյուղում, զուգորդելով չքա-վոր ու միջակ անհատական տնտեսութեանը ցույց տրվող տնտեսական, տեխնիկական ու հողագործական ոգնութիւնը խոշոր պետական ու կոլլեկտիվ յերկրագործութեան դիրքերի ամրացման ու ընդլայնման հետ, բարձրացնելով նրանց շա-հագրգովածութիւնը սեփական տնտեսութիւնը շարունակ բարելավելու գործում:

Վորչափով յերկրագործական աշխատանքի արտադրո-ղականութեան բացարձակ անհրաժեշտ բարձրացման վճռա-կան միջոց ե հանդիսանում խոշոր սոցիալիստական յեր-

կրագործութեան ստեղծումը, կուսակցութիւնն ու խորհրդ-դային իշխանութիւնն անշեղ կերպով տարեց տարի, ար-դունագործութեան ստեղծած նյութական բազայի աճման համապատասխան, պետք ե զարկ տան կոլլեկտիվների կազ-մակերպութեանն ու աճմանը, ցույց տալով նրանց ավելի ու ավելի աճող ֆինանսական ու նյութական ոգնութիւնն:

Միաժամանակ հաշի առնելով այն հանգամանքը, վոր խորհտնտեսութիւնների ու կոլտնտեսութիւնների զար-գացման առավելագույն հնարավորութեան դեպքում անգամ գյուղատնտեսական արտադրութեան հիմնական աճումը առաջիկա տարիներին ընկնում ե չքավոր ու միջակ անհա-տական տնտեսութեան վրա, վոր մանր տնտեսութիւնը դեռ շատ հեռու յե սպառելու և շուտով ել չի սպառի իր մոտ ունեցած հնարավորութիւնները, կուսակցութիւնը պետք ե շարունակ լայն չափով աջակցութիւն ցույց տա հաղթա-հարելու չքավոր ու միջակ անհատական տնտեսութեան տեխնիկական, կուլտուրական ու կազմակերպչական յետա-մնացութիւնը, բարձրացնելու բերքը և ընդարձակելու այդ տնտեսութիւնների ցանքսային տարածութիւնները:

Միայն այդ կերպ զուգորդելով խոշոր սոցիալիստա-կան յերկրագործութեան կազմակերպութեան հիմնական ու կարեւորագույն խնդրի վրա գործադրվող աշխատանքը չքավոր ու միջակ շարքային անհատական տնտեսութեանը ցույց տրվող ամենորյա լայն կազմակերպչական, տեխնի-կական ու տնտեսական ոգնութեան հետ, ինչպես և կուլա-կութեան աճման հետդհետե ուժեղացող սահմանափակման հետ,—կուսակցութիւնը կարող ե իրագործել յուր առաջա-դիր նպատակը—լինել գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականութեան բարձրացման գործի կազմակեր-պիչն ու ղեկավարը:

Համաձայն այս բոլորի, գյուղացիութեան հիմնական մասսաների հետ ունեցած մերձեցման ու կապի հին ձևերի

հետ միատեղ, զարգացնելով և ուժեղացնելով արդյունա-
գործութեան ապրանքաշրջանառութիւնը գյուղական տըն-
տեսութեան հետ, զարգացնելով կապի առևտրա-կոոպերա-
տիվային ձևերը քաղաքի և գյուղի միջև, առաջ են քաշ-
վում մերձեցման ու կապի նոր ձևեր, վորոնք զարգանում
են բանվոր դասակարգի՝ գյուղացիութեան հետ ունեցած
արտադրական կապի բնագայի վրա:

Յեթե մինչև վերջին ժամանակներս գյուղացիութիւ-
նը գնացել է պրոլետարիատի յետևից՝ նախ և առաջ դեպի
նրա հեղափոխական աշխատանքի արդյունքներն ունեցած
վտանգութեան պատճառով (կալվածատերերի դասակարգի
վոչնչացումն ու կալվածատիրական հողերի հանձնումը
գյուղացիներին), ապա զարգացման այժմյան աստիճանում
այդ վտանգութիւնը կարող է պահպանվել ու ամրանալ
միայն այն դեպքում, յեթե խորհրդային իշխանութիւնը
մշտական արտադրական ոգնութիւն ցույց տա չքավոր
ու միջակ գյուղացիութեանը՝ յերկրագործական աշխատան-
քի արտադրողականութեան բարձրացման գործում:

Այս խնդրի լուծման կարևորագույն մեթոդները, ամիչ-
կայի նոր ու կարևորագույն ձևերը, վորնց նշանակու-
թիւնը տարեց տարի պիտի աճի, հանդիսանում են.

ա) նոր խորհրտնտեսութիւնների կազմակերպումը և
հին խորհրտնտեսութիւնների աշխատանքի բարելավումը,
վորպես խոշոր գյուղատնտեսական գործարանների և չքա-
վոր ու միջակ անհատական գյուղացիական տնտեսու-
թիւններին բազմակողմանի ոգնութիւն ցույց տվող կենտ-
րոններ:

բ) նոր կոլլեկտիվ տնտեսութիւնների ստեղծումը և
հենրի զարգացումը, վորպես արտադրական կոոպերացման
և բաժան բաժան յեղած գյուղացիական տնտեսութիւննե-
րին հասարակական տնտեսութիւնների մեջ համախմբելու
բարձրագույն մի ձև:

գ) պետական ու կոոպերատիվային մերենա-տրակ-
տորային կայանների լայն ցանցի զարգացումը, վորպես
անհատական տնտեսութիւնների ամբողջ մասսայի արտա-
գրական ամենակարևոր պրոցեսաների համայնացման մե-
թոդներից մեկ:

դ) արտադրական կոոպերացման ամեն կերպով զար-
գացումը, ավելի ու ավելի ուժեղացնելով նրա մեջ համայ-
նացած աշխատանքի տարրերը.

յե) գյուղատնտեսական արտադրանքների մասսայական
կոնտրակտացիայի հետագա զարգացումը վոչ միայն վոր-
պես գյուղական տնտեսութեան և արդյունապործութեան
զարգացման կապի մի ձև, այլ և վորպես չքավոր ու միջակ
տնտեսութիւնների արտադրողականութեան մակարդակի
բարձրացման մի միջոց.

զ) մանր տնտեսութիւնների բերքը բարձրացնող պե-
տական ու կոոպերատիվային որգանների աշխատանքի
զարգացումը, վորպես մանր ու միջակ տնտեսութեան ար-
տադրողականութեան բարձրացման տակաւին ձեռքի տակ
յեղած ուղիներն ու հնարավորութիւններն ոգտագործելու
մի յեղանակ (հողաշինարարութիւն, վարձատու և սեր-
մազտիչ կետեր, վերանորոգութեան արհեստանոցներ, պայ-
քար փաստառուների դեմ, գյուղացիների վատ տեսակի սեր-
մերի փոխարինումը ազնիվ տեսակի սերմերով և այլն, և այլն):

8. Մերձեցման նոր ձևերն իրապես իրականացնելու
հնարավորութեան հարցում վեճական նշանակութիւն ունի
արդյունագործութեան հետագա զարգացումը: Յերկրի ին-
դուստրացման վրա ունեցած իր աշխատանքում կուսակ-
ցութիւնը յերնում է այն բանից, վոր արդյունագործու-
թիւնը պրոլետարական դիկտատուրայի յերկրում իր զար-
գացման մեջ պետք է ստեղծի «նյութական հիմք յերկրա-
գործական և ընդհանրապես գյուղատնտեսական աշխա-
տանքի արտադրողականութիւնը մեծ չափերով բարձրաց-

նելու համար, դրանով դրդելով մանր յերկրագործներին վորպես որինակ և իրենց սեփական շահի տեսակետից անցնելու խոշոր, կոլլեկտիվ, մեքենային յերկրագործությանը»: (Լե- նին, Կոմինտերնի 11 կոնգրեսի բանաձևը ազրարային հար- ցի առթիվ: Սղագր. հաշվետվ. եջ 616):

Յեթե կապիտալիստական հասարակության մեջ արդյու- նագործությունն արդեն իր զարգացման առաջին աստիճան- ներում իսկ դարձնում է իր դեմքը դեպի արտաքին շուկաները, գաղութները կապիտալիստորեն «սպասարկելու» կողմը, իսկ իր զարգացման բարձր աստիճաններում ծառայում է ռազ- մա-խմպերիալիստական նպատակներին, ապա խորհրդային յերկրում արդյունագործությունը իր ամրացման հետ մի- ասին հետզհետե ավելի մեծ չափերով է ծառայում գյու- ղի հիմնական մասսաների տնտեսության տեխնիկական ու հողագործական վերելքի և խոշոր կոլլեկտիվ ու պետական տնտեսություն ստեղծելու նպատակներին: Անցած տարի- ների վորձն ամբողջությամբ հաստատում է այդ Գյու- ղական տնտեսության վերելքը արագացնելու և նրա զարգացման նոր շրջանին համապատասխան ձևերով ամրապնդելու արմատական միջոցը հանդիսասում է ար- դյունագործության հետագա զարգացումը, վորպես գյու- ղական տնտեսության վերելքի, գյուղացիների՝ աղքատու- թյունից ազատվելու և նրանց առանձնացած տնտեսու- թյունները հասարակական տնտեսության մեջ համախըմ- բելու հիմնական պայման:

Այսպես է կուսակցության գլխավոր գիծը գյուղա- ցիական հարցում սոցիալիստական շինարարության այժ- մյան ետապում, վորն ամբողջապես յեկնում է բանվոր դա- սակարգի և գյուղացիության միության ամրապնդման լե- նինյան մեթոդներից, և վորը հիմնվում է կուսակցության XV համագումարի վորոշումների վրա:

Աջերի կարեւորագույն սխալները գյուղական հար- ցում.

Գյուղացիական հարցի վերաբերմամբ կուսակցության ունեցած գլխավոր գծի կիրառումը, վորը պահանջում է բանվոր դասակարգից լարել իր բոլոր ուժերը մի շարք յերկար տարիների ընթացքում, հանդիպում է ղժվարու- թյունների, վորոնք բղխում են կապիտալիստական շրջա- փակման, յերկրի տեխնիկական-տնտեսական յետամնացու- թյան, մանր-բուրժուական բնակչության թվական գերա- կշուության և սոցիալիստական հարձակման վերաբերմամբ կապիտալիստական տարրերի կողմից ցույց տրվող դիմադ- րության անման պայմաններից: Այդ պայմաններում սո- ցիալիստական շինարարության անման հետ զուգընթաց անխուսափելիորեն յերևան են զալիս վորոշ տատանումներ մանր-բուրժուական խավերում, ինչպես և բանվոր դասա- կարգի մի քանի միջախավերում: Այդ ատանումներն ի- րենց արտահայտությունն են գտնում նաև կուսակցության առանձին միջախավերում, վորոնք յենթարկվում են մանր- բուրժուական տարրերի ներգործությանը և հեռանում են կուսակցության գլխավոր գծից դեպի կուսակցության քա- ղաքականությունը բուրժուական իդեոլոգիային հարմարեց- նելու կողմը: Այստեղից էլ բղխում են կուսակցության աջ տարրերի տատանումներն ու սխալները, վորոնք առանձնա- պես վտանգավոր են ներկա պայմաններում:

Գյուղացիական հարցում աջերի ունեցած սխալներից գլխավորագույնները հետևյալներն են.

1. Հակառակ կուսակցության XV համագումարի վո- րոշման՝ աջ ուլլոնիստները ձգտում են յետ պահել ու շեղել խորհտնտեսությունների ու կոլլեկտիվ շարժման զար- գացումը, վորը վճռական նշանակություն ունի վոչ միայն

խորհրդային յերկրի ապագայի տեսակետից, յերբ յերկրագործութեան այդ ձևերը գերակշռող տեղ կընեն գյուղական տնտեսութեան մեջ, այլ և այժմյան դրութեան տեսակետից, յերբ խոշոր յերկրագործութեան զարգացումը պետական ու կուլեկտիվ ձևերով պրոլետարական պետութեան կողմից հակադրվում և խոշոր յերկրագործութեան ստեղծման կուլակային տիպին: Խոշոր սոցիալիստական գործարանների շինարարութեանից, կուլեկտիվների զարգացմանը ցույց տրվող հարաձուռն աջակցութեանից հրաժարվելու, ինչպես և գյուղական տնտեսութեանը խոշոր արտադրութեան բազայի վրա սիստեմատիկ ու համառ կերպով փոխադրելուց հրաժարվելու վերաբերմամբ աշերի վորդեգրած կուրսը կուլուսակցութեանը համարում և վորպես ուղղակի անցումն ղեպի կուլակների դիրքը, ուղղակի հրաժարումն բանվոր դասակարգի ղեկավար դերից գյուղատնտեսական արտադրութեան զարգացման բնագավառում: Կուլուսակցութեանը մերժում և այս աջ թեքումը կուլուսակցական գծից՝ նույն վճռականութեամբ, վորպիսի վճռականութեամբ նա մերժեց մի քանի տարի առաջ կուլուսակցական գծի տրոցկիստական խեղաթյուրումը, վորը քնասում և բանվոր դասակարգի և միջակ գյուղացիութեան միջև յեղած կապին:

2. Հակառակ գյուղական տնտեսութեան աճման և նրա մեջ նկատված վորակական վերելքի ցուցիչների, աջ ուղիւնիստները «գյուղական տնտեսութեան ղեգրադացիայի» մասին ունեցած իրենց դատարկաբանութեաններով ծածկում են իրենց սպարտանիստական պլատֆորմը գյուղական տնտեսութեան զարգացման ուղիների հարցում: Աջերի այս վայնասունը «գյուղական տնտեսութեան ղեգրադացիայի» մասին, ինչպես և աջերի հակալենինյան թեոթուական յապիւրին (հրաժարումն պետորգանների կարգավորող դերից շուկայում, հրաժարումն կուլակութեան վերին

խավերի անհատական հարկումից, հրաժարումն ճնշումն ուժեղացնելու քաղաքականութեանից և վորոշ պայմաններում ժամանակավոր արտակարգ միջոցների իրադրեծելուց կուլակութեան և գնբի վերաբերմամբ ունեցած խորհրդային քաղաքականութեան փորձերը վիժեցնելու դեմ, ապահովելով միաժամանակ խորհրդային իշխանութեան միջոցառումների հասարակական պաշտպանութեանը չքավոր-միջակ մասսաների կողմից), իրոք հանդիսանում են խորհրդային պետութեան վրա ունեցած կապիտալիստական տարրերի ճնշման իդեոլոգիական արտացոլումը, վորոնք ձգտում են շուռ տալ գյուղը և դնել կապիտալիստական ուղու վրա: Կուլուսակցութեանը վճռականորեն մերժում և աշերի այս նահանջողական դիրքը, վորը գործնականում սանում և ղեպի պրոլետարական ղեկավարութեան ժխտումը գյուղացիութեան վերաբերմամբ:

3. Հակառակ կուլուսակցութեան XV համագումարի վորոշումների, աջ ուղիւնիստները ձգտում են «կուլակի վրա հարձակման» կուլուսակցական գիծը փոխարինել կուլակի հետ յաղաղ համակեցութեան և «սոցիալիզմի մեջ կուլակի ներաճման» քաղաքականութեամբ: Սա գործնականում նշանակում և, թե աջ տարրերը հրաժարվում են կուլուսակցութեան հիմնական գծից, վորն ուղղված և ղեպի դասակարգերի վոչնչացումը: Միաժամանակ դրանով աջերի ընդունած գիծը ձգտում և հավերաժացնել կուլակային ստրկութեանը և գյուղացիութեան չքավոր ու միջակ մասսաների շահագործումը կուլակութեան կողմից:

Այստեղից ևլ բոլսում և այն, վոր աշերը բացասում են դատակարգային պայքարի սրման փաստը գյուղում, հակառակ Լենինի բազմիցս արած ցուցմունքների այն մասին, թե պրոլետարիատի ղեկատարուր նշանակում և վոչ թե դատակարգային պայքարի դադարեցում, այլ նրա շարունակումը նոր ձևերով, յերբեմն իսկ շատ սուր ձևերով, մասնավանդ

այն ժամանակ, յերբ սոցիալիստական ասարեբը աջողությամբ գուրս կմդհն կապիտալիստական տարբերին նեպի պայմաններում: Կուսակցությունը վճռականորեն մերժում է սոցիալիզմի մեջ կուլակի ներանման հակալինինյան թեորիան, մի թեորիա, վորը ձգտում է զինաթափ անել բանվոր դասակարգին իր դասակարգային թշնամիների առաջ, մթագնել նրա հեղափոխական աչալըջությունը, թուլացնել նրա ռազմունակությունը՝ տնտեսական դժվարությունները հաղթահարելու համար մղվող պայքարում՝ կուսակցության գլխավոր գծի հիման վրա:

4. Աջ ուկլոնիստները ձգտում են քողարկել չքավորության լայն մասսաների անկախ կազմակերպության դերն ու նշանակությունը: Կուսակցության այս կարևորագույն խնդիրը կոծկելու կամ լռության մատնելու փորձերն իրականում ուղղված են վոչ միայն չքավորի դեմ, այլ և միջակի դեմ, վորչափով չքավոր գյուղացիության կազմակերպումը նպատակ ունի ուժեղացնել գյուղում խորհրդային իշխանության նեցուկին, ուժեղացնել կուլակին տրվող հակահարձակումը, ամրացնել այդ հակահարձակման հողի վրա չքավոր ու միջակ գյուղացու միությունը: Կուսակցությունը վճռականորեն մերժում է կուսակցությունը դեպի ոպպորտունիստական ճահիճը տանող այդ փորձերը, գյուղում կուսակցության ունեցած նեցուկին ամրացնելուց հրաժարվելու քաղաքականությունը, կուլակի ձեռները բաց անելու քաղաքականությունը չքավորության հետ ունեցած նրա պայքարում:

5. Կենտկոմը մոբիլիզացիայի յենթարկեց բանվոր դասակարգի կամքն ու ակտիվությունը՝ իրականացնելու ինդուստրացման մաքսիմալ հնարավոր տեմպը գյուղացիության լայն մասսաների տնտեսական վերելքի և հասարակական խոշոր գյուղական տնտեսություն ստեղծելու համար ձեռք առնված միջոցառումների հետ զուգընթաց: Հակառակ

լենինի կողմից արված ուղղակի նշանակությունը այն մասին, թե «սոցիալիզմի միակ նյութական հիմքը կարող է լինել խոշոր մեքենային արդյունագործությունը, վորն ընդունակ կլինի վերակազմելու նաև յերկրագործությունը» (Լենին, հատ. XVIII, մասն I, էջ 316), աջ ուկլոնիստները ձգտում են շեղել արդյունագործության զարգացման տեմպը: Կուսակցությունը ամենայն վճռականությամբ մերժում է այդ դիրքը: Վոչ թե նահանջողական առաջարկներ արդյունագործության զարգացման տեմպի կրճատման մասին, այլ սմիչկայի ու կապի ամրացում, ուժեղացնելով ինդուստրացումը և արագ զարգացնելով արդյունագործության նյութերը, վորոնք սպասարկում են վերակազմվող գյուղական տնտեսության արտադրական պահանջներին — այսպես և կուսակցության դիրքը:

Աջ տարրերի այս գլխավոր սխալները կուսակցության մեջ, ինչպես և դեպի այդ սխալները յեղած հաշտողական վերաբերմունքը, տվյալ մոմենտին ներկայացնում են այն հիմնական վտանգը, վորի դեմ պայքարելու կողմը պիտի ուղղվեն կուսակցության ջանքերը: Կոնֆերենցիան ընդունում է, վոր առանց հաղթահարելու այս վտանգը՝ հնարավոր չէ աջողակ կերպով հաղթահարել գյուղական տնտեսության վերելքի և նրա վերակառուցման դժվարությունները:

Կուսակցությունն այսուհետև էլ անշեղ կերպով պիտի անց կացնի լենինյան լողունը՝ հենվել չքավորության վրա, ամուր կապ հաստատել միջակի հետ, պայքար մղել կուլակի դեմ: Առաջանալով լենինյան ուղիով, մերժելով նույնպիսի վճռականությամբ աջերի անցնելը բանվոր դասակարգի ղեկավար դերից հրաժարվելու գծին՝ տնտեսական շինարարության մեջ, վորպիսի վճռականությամբ կուսակցությունը ավելի առաջ մերժեց տրոցկիստների հրաժարումը միջակի հետ միություն կնքելուց, — կուսակցությունը

կարող ե վճռել իր անաջ ծառայած ամբողջ գյուղական տնտեսութեան զարգացումը արագացնելու խնդիրը, միջակի հետ միութեանն ամրացնելու և բանվոր դասակարգի զեկավար դերն ուժեղացնելու խնդիրը այս միութեան մեջ խոշոր հասարակական հողագործութեան ստեղծելու և չքավոր ու միջակ տնտեսութեանների ամբողջ մասսային զեպի տեխնիկայի, կուլտուրայի և կազմակերպութեան բարձրագույն մակարդակն առաջնորդելու պրոլետարական մեթոդներով:

Յեղնելով այս բոլորից, Կոնֆերենցիան անհրաժեշտ է համարում իրագործել հետևյալ գործնական միջոցառումները:

III

Մեռնեցման նոր ձեւերն ամրապնդելու յեւ միջակի հարկերը քեթեվացնելու գործնական միջոցները.

1. Կոնֆերենցիան կուսակցութեան առանձին ուշադրութեանն է հրավիրում համառ ու տեւական աշխատանքի անհրաժեշտութեան վրա՝ իրականացնելու Կենտգործկոմի նստաշրջանի զեկրետը բերքատուութեանը բարձրացնելու միջոցների մասին: Առանձնապէս կարևոր է կիրառել զեկրետով նախատեսված ժամկետներին և զեկրետով մատնանըված չափերով հետևյալ միջոցները, վորոնք ապահովում են հնգամյակի վերջին՝ բերքատուութեան բարձրացումը մեր յերկրում առնվազն 30-35 տոկոսով.

ա) արագացնել հանրապետական կառավարութեանների կողմից վորոշված հողաշինարարութեաններին ավարտման ժամկետերը և առաջին հերթին հողաշինարարութեան ամենապարզ ձևերը, վորոնք վերացնում են հողային անկազմակերպութեան հիմնական թերութեանները, այն է հողերի ցիրուցանութեանը, բազմացանութեանը, նրանց յերկար և հեռավոր տեղերում գտնվելը.

բ) փոխել հինգ տարվա ընթացքում բոլոր հիմնական մշակութայիններում գյուղացիների վատ տեսակի սերմացուները բարելավված ու տեսակային սերմերով.

գ) մատակարարել գյուղական տնտեսութեանը 2-3 տարվա ընթացքում ամբողջ հացահատիկը մաքրելու և տեսակավորելու համար ամեն տեսակի անհրաժեշտ մեքենաներ և կազմակերպել նույն ժամանակամիջոցում սերմացուների պարտադիր մաքրումն և տեսակավորումն ամենուրեք, ինչպէս և պայքարը վնասակար բույսերի դեմ.

դ) ընդարձակել վնասատուների դեմ պայքարի միջոցների արտագրութեանը 2-3 տարվա ընթացքում այնչափ, վոր լիովին ապահովի գյուղական տնտեսութեան պահանջները, և կազմակերպել մասսայական պայքար վնասատուների դեմ.

ե) զարգացնել վարձատու կետերի և վերանորոգիչ արհեստանոցների ցանցը այնչափ, վոր ապահովի գյուղական տնտեսութեան կողմից ոգտագործվող մեքենաների անընդհատ աշխատանքը և չքավոր ու միջակ տնտեսութեաններին՝ բարդ մեքենաներից ոգտվելու հնարավորութեանը.

զ) մասսայորեն տարածել հողագործական ամենահասարակ միջոցառումները, վոր նախատեսել է ԽՍՀ Միութեան Կենտգործկոմի նստաշրջանի զեկրետը՝ «բերքատուութեանը բարձրացնելու միջոցների մասին»:

է) տարածել գյուղատնտեսական զիտելիքներ և ուժեղացնել գյուղատնտեսական ոգնութեանը գյուղացիներին:

2. Կոնֆերենցիան լիովին հավանութեանն է աալիս գյուղատնտեսական հարկի որենքի հիմնական սկզբունքներին, որենքի, վորն ազատում է հարկից չքավոր տնտեսութեաններին (բոլոր տնտեսութեաններին 35 տոկոսը),

տալիս ե բավականաչափ արտոնություններ կոլլեկտիվներին և ամբողջ հարկի 30—55 տոկոսի չափ հարկ ե դնում կուլակային վերին 4—5 տոկոս տնտեսությունների վրա: Կոնֆերենցիան լիովին հավանություն ե տալիս կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի գործադրած միջոցառումներին՝ միջակի հարկային բեռը թեթևացնելու նպատակով, յեղնելով այն բանից, վոր այդ միջոցառումները հացի գնբրի առաջուց կիրառած բարձրացման հետ միասին պետք ե ավելի ուժեղ կերպով շահագրգռեն միջակին՝ իրականացնելու այն միջոցառումները, վորոնք բարձրացնում են նրա տնտեսության կուլտուրական և տեխնիկական մակարդակը: Մասնավորապես կոնֆերենցիան լիովին հավանություն ե տալիս գյուղատնտեսական հարկի վոչ պակաս, քան 50 միլիոն ուբլով իջեցմանը. առաջեկա յերկու տարվա ընթացքում ցանքսային տարածության ամբողջ աճման հարկերից ազատվելուն չքավոր ու միջակ տնտեսություններում. հարկային արտոնություններին՝ չքավորների ու միջակների համար, վորոնք իրականացնում են բերքատվության դեկրետով նախատեսած միջոցառումները. անհատական հարկումի հոգվածը միջակ տնտեսությունների վերաբերմամբ գործադրելը կատեգորիկ կերպով արգելելուն. դաշտաբուծության, անասնապահության և մարգաբուծության յեկամուտների նորմաների սահմանելուն և հարկումի պրոգրեսսիային՝ յերեք տարով. հարկի վերաբերմամբ արվող դեղջին՝ բազմաշունչ տնտեսությունների համար. բազմադաշտ ցանքսափոխությունը կիրառող տնտեսությունների համար տրվող արտոնություններին, դրա հետ ցուզընթաց կուլակային տնտեսությունների (տնտեսությունների 2-ից մինչև 3 տոկոսը ամբողջ Միության մեջ) ամենահարուստ մասը անհատական հարկումի յենթարկելը լիովին պահպանելուն:

Կոնֆերենցիան պահանջում ե կուսակցական ու խորհրդային բոլոր աշխատողներից, վոր հարկը գործնականա-

պես անց կացնելիս՝ ապահովված լինի հեղափոխական որինականաթյունը և միանգամայն բացառվեն ամեն տեսակի շեղումներ գործող որենքից դեպի հարկատուների գրությունը վատթարացնելու կողմը: Գյուղատնտեսական միասնական հարկը գործնականապես անց կացնելու դեկավարության հարցին կուսակցական ու խորհրդային տեղական բոլոր օրգանները պետք ե բացառիկ ուշադրություն դարձնեն, վորչափով հեղափոխական որինականության յուրաքանչյուր խախտում այդ բնագավառում հանդիսանում ե առանձնապես վնասակար՝ դեպի խորհրդային իշխանությունը գյուղացիության վստահությունն ամրապնդելու և բանվոր դասակարգի ու գյուղացիության հիմնական մասսաների միությունն ապահովելու տեսակետից:

3. Չնայելով կուսակցության մի շարք վորոշումներին, մանավանդ վուսակցության XV համագումարի վորոշումներին, գյուղացիության արտադրական կոոպերացման աշխատանքները գյուղատնտեսական կոոպերացիայի գործունեության մեջ տակավին հարկավոր տեղ չեն գրավել: Այդ պատճառով գյուղատնտեսական կոոպերացիայի աշխատանքները չի կարելի համարել բավարար և բավական թե խոշոր կոլլեկտիվ յերկրադործությանն աջակցելու և աճումը կազմակերպելու գծով և թե՛ անհատական, չքավոր ու միջակ տնտեսությանը գյուղատնտեսական ու տեխնիկական ոգնություն ցույց տալու գծով:

Կոնֆերենցիան առաջարկում ե գյուղատնտեսական կոոպերացիայում աշխատող բոլոր կոմունիստներին ուժեղացնել աշխատանքը՝ իրականացնելու կուսակցության XV համագումարի տված ցուցմունքները, և միջոցներ ձեռք առնել՝ ա) վորպեսզի կոոպերատիվ կազմակերպություններն ավելի ընդարձակ կերպով ընդգրկեն չքավոր ու միջակ գյուղացիութունը. բ) վորպեսզի ավելի ուժեղ չափերով աճեն, առևտրական գործունեյության հիման վրա, գյուղա-

յիական տնտեսութունը իսկական արտադրական կոոպերացման յենթարկելու աշխատանքները. գ) վորպեսզի սկզբնական կոոպերատիվային արտադրական համախմբումները հետգհետե ավելի ու ավելի խոշոր կոլլեկտիվ տնտեսութունների վերածվեն. գ) վորպեսզի գյուղատնտեսական արտադրանքների վերամշակման ձեռնարկութունները հետագայում ավելի ուժեղ կերպով զարգանան, լայնորեն զործադրելով այս շինարարութւյան մեջ գյուղացիական բնակչութւյան միջոցները. յե) վորպեսզի լայն կերպով զարգանա կոոպերացման յենթարկված բնակչութւյան ինքնագործունեյութունը, ձեռներեցութւյունն ու ինքնաքննադատութւյունը:

Կոնտրակտացիան գյուղատնտեսական կոոպերացիայի աշխատանքում գյուղական տնտեսութւյան և նրա վերակառուցման վերելքի արտադրական աշխատանքի ամենակարևոր մեթոդներից մեկը պետք է լինի, մտցնելով պայմանագրերի մեջ հողագործական ամենահասարակ միջոցառումների անհրաժեշտ միջնամբ, վորոնք պարտադիր են կոնտրակտացիայի մեջ մասնակցող տնտեսութւյունների համար, ապահովելով անհրաժեշտ ագրոտեխնիկութւյունը պայմանագիր կնքած տնտեսութւյուններին. լայն քննարկութւյան յենթարկելով կոնտրակտացիոն պայմանագրերը գյուղացիական ժողովներում. կապելով գյուղատնտեսական մեքենաներ, սերմացու, պարարտանյութեր մատակարարելու և վարկավորման աշխատանքները կոնտրակտացիայի հետ:

4. Կոնֆերենցիան լիովին հավանութւյուն է տալիս կենտկոմի պլենումի վորոշմանը նոր խորհանտեսութւյուններ կազմակերպելու մասին այն չափերով, վոր նրանք ապահովեն 1932 թվի արտադրութւյունը առնվազն 1.646.200 տոնն ապրանքային հացով, ինչպես և գործնական միջոցառումները՝ իրականացնելու համար այդ խնդիրը: Համարելով այդ առաջադրութւյունը միջնամալ, կոնֆերենցիան առաջարկում է կուսակցութւյան կենտկոմին հետա-

գայում լրացուցիչ ազատ հողային ֆոնդեր փնտել, վորոնք պիտանի լինեն հացահատիկային խորհանտեսութւյուններ կազմակերպելու համար՝ պայմանով, վոր հնգամյակի վերջում Զերնտորեստը 10-ից մինչև 12 միլիոն հեկտար հող ունենա իր տրամադրութւյան տակ, վորպես ռեզերվ խորհանտեսութւյունների հետագա զարգացման համար:

Ընդգծելով տարված աշխատանքի անբավարարութւյունը հին խորհանտեսութւյունների աշխատանքի վերելքի ու բարելավման բնագավառում, կոնֆերենցիան հավանութւյուն է տալիս Գոսսելխինդիկատի, Սախարոտրեստի և Ուկրսովխոզմիութւյան գեկուլցների առթիվ Գաղբյուրոյի հանած վորոշումներին, վորոնք ձգտում են ամրապնդել հին խորհանտեսութւյունները, և առաջարկում է կուսակազմակերպութւյուններին՝ լիովին կիրառել այդ վորոշումները կյանքի մեջ:

5. Հավանութւյուն տալով ամբողջութւյամբ այն միջոցներին, վոր անց է կացրել կենտկոմը կոլտնտեսական շարժմանը նյութական ու ֆինանսական ոգնութւյուն ցույց տալու բնագավառում, կոնֆերենցիան ընդգծում է, թե կոլտնտեսական շարժման ամբողջ կենսունակութւյունը ցուցահանող ամենայական փաստը հանդիսանում է այն, վոր կոլտնտեսութւյուններն աճում են ինքնագործունեութւյան և հենց իրենց գյուղացիական մասսաների ներքևից յեկող ձեռներեցութւյան հիման վրա, վոր խոշոր տնտեսութւյան առավելութւյուններն արդեն իրենց արտացոլումն են գրտնում կոլլեկտիվներում (կոլտնտեսութւյուններում բերքն ավելի բարձր է միջին գյուղացիականից, ապրանքայնութւյունը բավականաչափ գերակշռում է անհատական գյուղացիական տնտեսութւյունների ապրանքայնութւյանը, բազմադաշտ ցանքսափոխութւյուններն ու հողի բարելավված մշակումն ավելի ու ավելի մեծ չափերով են կիրառվում): Վորպես կոլտնտեսական շարժման առանձնապես կարելիոր մի զիծ

վերջին ժամանակներում՝ կոնֆերենցիան նշում է ձգտումն դեպի կոլլեկտիվ տնտեսութունը գյուղի վոչ միայն չբավոր խավերի, այլ և միջակների կողմից, վորոնք մտնում են կոլլեկտիվ տնտեսութունների մեջ իրենց կահույքով ու անասուններով: Կոլտնտեսական շարժման ամենակարևոր թերութունը նրա զարգացման այժմյան աստիճանում հանդիսանում է այն, վոր նրա կազմակերպչական ընդգրկուհուն ու նրա տեխնիկական հիմքի ուժեղացումը բավականաչափ յետ են մնում ներքևից յեկող շարժման թափից ու պահանջներին:

Դրա համեմատ ել՝ կոնֆերենցիան կուսակցական կազմակերպութունների առանձին ուշադրութունն է հրավիրում այն բանի վրա, թե անհրաժեշտ է՝

ա) հետզհետե ավելի ու ավելի լայն չափերով մատակարարել կոլլեկտիվներին բարդ մեքենաներ և մանավանդ տրակտորներ:

բ) ուժեղացնել արտադրական պրոցեսների համայնացման աշխատանքը հողը համայնական կերպով մշակող ընկերութուններում, ձգտելով ամեն կերպ աջակցել ֆինանսական, նյութական ու կազմակերպչական ոգնության միջոցներով, վորպեսզի նրանք անցնեն կոլլեկտիվ շարժման ավելի բարձր ձևերին (արտելներ, կոմունաններ):

գ) ամեն կերպ աջակցել վորպեսզի ամբողջ գյուղեր ու շեներ անցնեն աշխատանքի կոլլեկտիվ ձևերին, ոգտագործելով դրա համար տեսակավոր սերմերի ցանքսերի կոնտրակտցիան հոծ մասսաների կողմից, ոգտագործելով մեքենա-տրակտորային կայարաններն ու այն կոլոնները, վորոնց նշանակութունը ներկա մոմենտին դառնում է կարևորագույն մի ազդակ, միաժամանակ ձեռք առնելով բոլոր միջոցները՝ հաղթահարելու կուլակային դիմադրութունը և աստիճանաբար այդ հիման վրա ստեղծելու խոշոր կոլլեկտիվ տնտեսութուններ:

դ) ամեն կերպ զարկ տալ հին կոլտնտեսութունների խոշորացման զարգացող պրոցեսին, նրանց կազմի մեջ գրավելով նոր անդամներ, կազմակերպելով կոլտնտեսութուններ, փնջային համախմբութուններ, վորպես համապատասխան ուսյոնների կոլտնտեսութունների ագրոարտադրական ու կազմակերպչական կենտրոններ:

յ) առանձնապես աջակցութուն է գերադասելի ոգնութուն ցույց տալ խոշոր կոլտնտեսութուններին, վորոնք ընդունակ են տալ մաքսիմում ապրանքայնութուն և վորոնք կանգնած են ամբողջությամբ ժամանակակից տեխնիկայի և գյուղատնտեսական գիտության մակարդակի վրա:

զ) ուժեղ գործնական ու պլանային ղեկավարութուն ցույց տալ կոլտնտեսական շարժմանը կոլտնտեսական միութունների կողմից:

Այս բոլորի հետ զուգընթաց՝ կուսակցական կազմակերպութուններն անպայման պիտի հիշեն, վոր կոլտնտեսական շարժման աջոգութունն ապահովվում է իրենց՝ կոլտնտեսութունների անդամների գիտակցականությամբ, ակտիվությամբ, գրագիտությամբ և ձեռներեցությամբ: Դրա համեմատ ել անհրաժեշտ է ամենավճռական կերպով ուժեղացնել ընդհանուր քաղաքական և կուլտուրական աշխատանքը կոլլեկտիվներում: Կոլտնտեսութունների ամենագիտակից, սոցիալիստական գործին ամենից շատ նվիրված անդամները պետք է կոմյերիտմիության և կոմունիստական կուսակցության շարքերը գրավվեն՝ պայմանով, վոր ինչ չափով ուժեղանում է կոլլեկտիվ շարժումը, նույն չափով ել կոլտնտեսական մասսան մեր կուսակցության գյուղացիական բաժնում ավելի ու ավելի զգալի դառնա:

Կոնֆերենցիան կենտկոմի առանձին ուշադրութունն է հրավիրում այն բանի վրա, վոր անհրաժեշտ է վճռական կերպով բարելավել մասնագետ-աշխատողների և կազմա-

կերպիչների կազմեր ստեղծելու գործը խորհրդատեսուծյունների ու կոլտնտեսուծյունների համար և զարգացնել խոշոր մեքենային յերկրագործության կազմակերպման ու ռացիոնալացման պրոբլեմների ուսումնասիրության գիտական աշխատանքը: Լիովին հավանություն տալով Ստալինգրադի կառուցվող տրակտորային գործարանի արտադրական ծրագրի մեծացմանը 20-ից մինչև 40.000 մեքենայի՝ կոլտնտեսուծյունների ու խորհրդատեսուծյունների մեքենայացումը ուժեղացնելու նպատակով, կոնֆերենցիան Կենտկոմի առանձին ուշադրությունն է հրավիրում այն բանի վրա, վոր անհրաժեշտ է յեկող տարի սկսել նոր տրակտորային գործարանի կառուցման աշխատանքները, լավ պայմանների մեջ դնել և ուժեղացնել արտադրությունը այլ մեքենաների, վորոնք համապատասխանում են ժամանակակից տեխնիկայի մակարդակին և խոշոր արտադրության պահանջներին (տրակտորների հետ կապ ունեցող զանազան գործիքներ, շարքացաններ և այլն):

Կուսակցության առաջ ծառայած մերձեցման նոր ձևերի ամրապնդման ու զարգացման խնդիրներին համապատասխան՝ կոնֆերենցիան պահանջում է խորհրդատեսուծյուններից ու գյուղատնտեսական կոլլեկտիվներից լայնացնել բազմակողմանի ոգնության գործը չբավոր ու միջակ գյուղացիությանը (տեսակային սերմերի, աղնվացեղ անասունների արտադրությունը, գյուղատնտեսական գործիքների վերանորոգության ու վարձատվության կազմակերպումը, պայքար վնասատուների դեմ և այլն):

Անհրաժեշտ է անհապաղ միջոցներ ձեռք առնել ֆինանսապես ամրապնդելու և զարգացնելու փորձնական հիմնարկությունների ու գյուղատնտեսական բարձրագույն կըրթական հաստատությունների գոյություն ունեցող ցանցը, ինչպես և բանալու գիտական-հետադոտական ու փորձնական նոր հիմնարկություններ:

6. Նկատի առնելով այն հանգամանքը, վոր չնայելով կուսակցական մի շարք վորոշումներին, գյուղական տնտեսության արտադրողականության վերելքի հարցերին տեղական խորհրդային որգանների աշխատանքների մեջ բավարար չափով ուշադրություն չի հատկացվում, և այդ բնագավառում ցանքսային կամպանիաների ժամանակ ձեռք բերված նվաճումները տակավին բավարար չեն, կոնֆերենցիան առաջարկում է կուսակցական կազմակերպություններին՝

ա) ուժեղացնել տեղական խորհուրդների աշխատանքը գյուղի արտադրական սպասարկության բնագավառում— խորհուրդների համագումարներում, հաշվետու ժողովներում: Գործկոմների ու խորհուրդների աշխատանքի աջողության չափանիշը չքավոր ու միջակ մասսաների շահերը պտղապանելու գործում գյուղի կուլակային և ամեն տեսակ այլ կապիտալիստական տարրերի շահագործումից՝ պետք է լինի այն, թե ինչ չափով նրանք հտնդիսանում են գյուղական տնտեսության վերելքի ղեկավարներ, խոշոր հասարակական գյուղական տնտեսության և չքավոր ու միջակ գյուղացիական անհատական տնտեսության արտադրական ոգնության կազմակերպիչներ:

բ) խորհրդային իշխանության կողմից գյուղական տնտեսության մեջ զրված միջոցների ոգտագործումը դնել նույնպիսի հասարակական հսկողության տակ, ինչպիսի հսկողության տակ գնում են բանվորները քաղաքներում հիմնական շինարարությունը:

գ) աշխուժացնել և ուժեղացնել գյուղատնտեսական հանձնաժողովների (գյուղխորհուրդներին, ռայոնական ու վոլոստային գործադիր կոմիտեաներին կից գտնվող սեկցիաների) աշխատանքը: մտցնել նրանց կազմի մեջ կոլլեկտիվ տնտեսությունների անդամներին, խորհրդատեսուծյունների աշխատողներին, Փոխօգլոմի ներկայացուցիչներ:

ըին և չքավոր ու միջակ այն անհատներին, վորոնք կուտուրական ճանապարհով են տանում իրենց տնտեսությունը. դնել գյուղատնտեսական սեկցիաների աշխատանքը արտադրական խորհրդակցությունների աշխատանքի որինակով արդյունագործական ձեռնարկություններում:

դ) ամեն կերպ աջակցել կարմիր-բանակայինների մեջ աճող շարժմանը, վորը ձգտում է համախմբել նրանց անհատական տնտեսությունները կոլլեկտիվներում, ուժեղացնելով կոլտնտեսական շինարարության ժողովրդականացումը կարմիր Բանակում և ավելի առաջավոր կարմիր-բանակայիններից կոլտնտեսական շարժումը կազմակերպողների պատրաստումը:

յ) ուժեղացնել և բարելավել հողային որգանների աշխատանքը: Գյուղացիության հետ մերձեցման նոր ձևերի իմաստի համաձայն: Հողորգանները աշխատանքի մեջ պետք է վերացվեն մինչհեղափոխական զեմատվոյական սահմանափակության բոլոր մնացորդները, վորոնք հողագործական աշխատանքը ծառայեցնում էլին առանձին ունևոր տնտեսություններին: Հողային որգանները պետք է խոշոր սոցիալիստական տնտեսության կազմակերպիչները և հողագործական հեղափոխության ղեկավարները դառնան գյուղական տնտեսության մեջ, զբաղվելով նրանց մեջ միլիտանավոր չքավոր ու միջակ տնտեսություններ և նրանց ծառայեցնել բոլոր գյուղատնտեսներին ու հողաշինարարներին:

7. Կոնֆերենցիան ամբողջությամբ հավանություն է տալիս կենտրոնական կոմիտեյի անցկացրած միջոցներին՝ ուժեղացնելու համար գյուղական չքավորության կազմակերպումը: Այդ բնագավառում ձեռք բերված աշողությունները միանգամայն անբավարար համարելով, կոնֆերենցիան առաջարկում է կուսակցական կազմակերպություններին,

ե՛լ ավելի ուժեղացնել չքավորության կազմակերպության աշխատանքը, համախմբելով նրան և բանվոր դասակարգի իսկական նեցուկը դարձնելով գյուղում:

Նոր ժամանակաշրջանը և մերձեցման նոր ձևերը պահանջում են բավականաչափ ուժեղացնել պրոլետարական բաղադրի և գյուղի կապը, վորպես բանվոր դասակարգի ղեկավար դերի ամրապնդման միջոց մեր յերկրում:

1923 թվին Լենինի կողմից գրված բանվորների և գյուղացիների հարաբերության պարզացման և նրանց միջև ընկերության բազմատեսակ ձևեր սահմանելու խնդիրը ներկա պայմաններում հանդիսանում է գյուղի սոցիալիստական վերակազմության համար պայքարող բանվոր դասակարգի կարևորագույն պարտավորություններից ու խնդիրներից մեկը: Այդ նպատակներով անկասկած անհրաժեշտ է բարձրացնել և ուժեղացնել շեֆային ընկերությունների աշխատանքը, անցնել մի շարք կամավոր ընկերությունների ստեղծմանը (և՛ կուսակցական, և՛ պրոֆեսիոնալ, և՛ ամեն տեսակ գործարանային), վորոնք իրենց նպատակ են դարձնում սիստեմատիկ ոգնությունը գյուղին նրա կոոպերատիվային-սոցիալիստական զարգացման մեջ: Կուսակցությունն ամեն կերպ պիտի պաշտպանի հատուկ բանվորական այն ընկերությունների ստեղծման փորձը, վորոնց նպատակն է զարկ տալ բերքատվության բարձրացմանը: Պետք է ստեղծվեն յերկրագործության կոլլեկտիվացման աջակցող ընկերություններ: Պետք է լայն կերպով պաշտպանություն գտնի բանվորների ձեռներեցությունը:

Բանվորական խմբեր գյուղ ուղարկելու գործում, վորոնք ոգնություն են ցույց տալիս չքավոր ու միջակ տնտեսությանը, տջակցում են գյուղական տնտեսության կոլլեկտիվացմանը և ամրապնդում են չքավոր-միջակների միությունը նրա պայքարի մեջ՝ ընդդեմ կուլակության:

Կոնֆերենցիան այդ իսկ պատճառով առանձին ուշադրություն է դարձնում բանվորական խմբերի գործի զարգացման վրա, վորպես բանվոր դասակարգի և գյուղացիության կապի, և գյուղում՝ բանվոր դասակարգի ունեցած դեկավար դերի ամրապնդման ամենակենսական ձևերից մեկի վրա:

III.

ԲՅՈՒՐՈՎՐԱՏԻՋՄԻ ԴԵՄ ՏԱՐՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՄԵՐՁԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

1. Պայքարը բյուրոկրատիզմի դեմ՝ ապարատի պարզացման ու եժանացման համար և այդ ապարատը մասնաներին մոտեցնելը ներկա պայմաններում կուսակցության առանձին կարելիոր խնդիրն է հանդիսանում, վորչափով՝

ա) ինդուստրացման արագ տեմպի կիրառումը և գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման գործին անցնելը նոր պահանջներ են առաջադրում պետական ամբողջ ապարատի վորակի նկատմամբ.

բ) յերկրում դասակարգային պայքարի ուժեղացմամբ պետական ապարատի բյուրոկրատական խեղաթյուրումները մի շարք դեպքերում դառնում են կուլակության, քաղաքային բուրժուազիայի և բուրժուական ինտելիգենցիայի ճնշման արտահայտություն բանվոր դասակարգի վրա: Կուսակցության և խորհուրների պայքարը պետական ապարատի բյուրոկրատական խեղաթյուրումների դեմ, վորոնք հաճախ թաքցնում են լայն աշխատավորական մասսաների աչքերից պրոլետարական պետության իսկական ընույթը, դասակարգային պայքարի կարելիորագույն ձեւերից մեկն է հանդիսանում:

Ժողովրդական տնտեսության հնգամյա պլանի կողմից առաջ քաշած մեծամեծ խնդիրները ինչպես մեր արդյունա-

դործության հետագա զարգացման և նրան նոր տեխնիկական բազայի վրա բերելու բնագավառում, այնպես և գյուղական տնտեսության և նրա սոցիալիստական վերակառուցման վերելքը արագացնելու բնագավառում, չեն կարող վճուվի առանց պետական ապարատի իսկական բարելավման, առանց նրա պարզացման ու եժանացման, առանց պետական ապարատի յուրաքանչյուր ողակի կողմից իր առաջ դրած խնդիրների պարզորոշ վճուման, առանց նրա անշարժության, քաղքուկների, բյուրոկրատական ճնշման, ընդհանուր փոխադարձ յերաշխավորության և դեպի աշխատավորության կարիքները յեղած անուշադրության վճուական հաղթահարման, առանց վճուական կերպով ապարատից դուրս քշելու այն բոլոր պաշտոնյաներին, վորոնք միանում, հարմարվում են կապիտալիստական ու կուլակային տարրերի հետ կամ վորոնք անընդունակ են հակահարված տալու կուլակային-նեպոմանական հարձակման փորձերին պրոլետարիատի վրա և խեղաթյուրում են դասակարգային գիծը, առանց վտարելու արդեն հնացած և խորհրդային յերկրի պահանջներին չբավարարող կառավարչական ձևերը:

2. Վերջին ատրիներս ծավալված պայքարը բյուրոկրատիզմի դեմ և պետական ապարատի բարելավման բնագավառում կատարված աշխատանքը անպայման արդեն տվին վորոշ արդյունքներ:

Ինքնաքննադատությունը, չնայելով այն հանգամանքին, վոր նրա զարգացման մեջ արված են միայն առաջին քայլերը, կուսակցական և անկուսակցական բանվորների ու գյուղացիների լայն խավերին պետական ապարատի թերույթյունները վերացնելուն մասնակից դարձնելու կարևորագույն յեղանակներից մեկն է հանդիսանում:

Արտադրական խորհրդակցությունների աշխատանքի բարելավումը, գործարանային ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովների ստեղծումը, տնտեսական խորհրդակցու-

թյունները աշխատանքը, խորհուրդները սեկցիաների անշխատանքը դործարանների տնտեսական ձեռներեցութեան ընդարձակման և կվճ—ԲԳՏ ուժեղացրած վերահսկողութեան հետ զուգընթաց՝ խորհրդային որգանների աշխատանքի վրա— այս բոլորը նպաստեցին վոչ միայն ուժեղացմանը՝ հայտարարված թերութեանները վերացնելու համար, այլ և ընդարձակեցին այն բանվորների թիվը, վորոնք գիտակցորեն մասնակցում են այդ թերութեաններն ուղղելու աշխատանքներին:

Պայքարը խնայողութեան ուժիմի համար և խորհրդային ապարատի ռացիոնալացման աշխատանքի ծավալումը (հաշվետվութեան կրճատում, ավելորդ հիմնարկութեանները լիկվիդացիա, մի շարք հիմնարկութեանները կազմի և ֆունկցիաների պարզացում, տեղական ու ստորին որգանների իրավունքների ու պարտավորութեանները մեծացում) վերջին յերկու տարվա ընթացքում արդեն տվին զգալի գործնական հետևանքներ. վարչական-կառավարչական ծախսերը պակասել են առնվազն 300 միլիոն ռուբլով և վարչական-կառավարչական ապարատը կրճատման և յենթարկվել ավելի, քան 100 հազար հոգով:

Պլանացման սխտեմի վորոշ բարելավումը, թեթևացնելով կենտրոնական հիմնարկութեանները մի շարք մանր գործերից, հնարավորութեան տվեց զգալի չափով մոտեցնելու տնտեսական տարվա սկզբին ժողովրդա-տնտեսական պլանների մշակման ու հաստատման ժամկետերը:

Բանվորա-Գյուղացիական Տեսչութեան աշխատանքներին մասնակցում են հարյուր հազարավոր բանվորներ ու ծառայողներ:

Տնտեսավարութեան, բյուրոկրատիզմի ու քաշքշուկները մեջ մեղավոր ճանաչվածներին Բանվոր-Գյուղացիական Տեսչութեան գանգառների բյուրոյին կից գտնվող բանվոր ատենակալների (հաստատված ԲԳՏ կողմից) ու դա-

տարանի կողմից պատասխանատվութեան կանչելու և համապատասխան տուգանքների յենթարկելու մեծ շափերով կիրառվող պրակտիկան, շարք ու փշուր անելով բավական տարածված համոզմունքն այն մասին, թե բյուրոկրատիզմի մեջ մեղադրվողները պատասխանատվութեան և պատժի չեն յենթարկվում, հարկադրում և ուշքը գլուխը հավաքել խորհրդային ապարատի թե պատասխանատու աշխատավորներին և թե շարքային ծառայողներին:

Կուսակցութեան կենտրոնական որգանում և կուսակցական կոմիտեաների գրեթե բոլոր որգաններում կազմակերպված «ԲԳՏ թերթիկները» դառնում են բյուրոկրատիզմի կոնկրետ կրողներին յերևան բերելու և նրանց դեմ պայքարի յեղանակներից մեկը, բանվոր դասակարգի մորթիլիզացիայի մեթոդներից մեկը՝ բյուրոկրատական խեղաթյուրումների դեմ:

3. Սակայն, համեմատած կուսակցութեան առաջ ծառայած խնդիրների հետ բյուրոկրատիզմի դեմ պայքարի բնագավառում, այդ նվաճումները դեռ առաջին, և այն ել չափազանց անբավարար, մոտեցումն են պետական ապարատի բարելավման գործին, վորը վոչ միայն շարունակում և դեռ մնալ արտասովոր չափով մեծածավալ, թանկ և բյուրոկրատական, այլ և «շատ հանախ գործում և մեր դեմ»: (Լենին, հատ. XVIII, մասն II, էջ 90):

Այդ պատճառով ել հիմնական են հանդիսանում կուսակցութեան հետեյալ հերթական խնդիրները պետական ապարատի բարելավման և բյուրոկրատիզմի դեմ պայքարի բնագավառում՝

ա) կատարման ստուգումն. բ) պետական ապարատի անձնական կազմի բարելավումն. գ) կառավարչական սխտեմի համապատասխանացումը մեր տնտեսութեան սխտեմին և այն պահանջներին, վոր առաջադրում և տնտեսութեան զարգացումը պետական ապարատին:

ԿԱՏԱՐՄԱՆ ԱՍՈՒՂՈՒՄԸ.

Փաստական կատարման ստուգումը դառնում է պետական ապարատի բարելավման ամբողջ աշխատանքի ամենակարեւոր մասը: Համաձայն դրա՝ կոնֆերենցիան վորոշում է.

1. Խորհրդային ապարատի հիմնական ու նշանակալից թերութիւնները հանդիսանում է այն, վոր մինչև այժմ կուսակցական ղերեկտիւներն ու խորհուրդների վորոշումները վատ են կատարվում և հաճախ խեղաթյուրվում են: ԿՎՀ—ԲԳՏ աշխատանքի փորձը լիովին հաստատեց այն բանի ճշտութիւնը, թե սիստեմատիկ վերահսկողութիւնը կառավարութեան որենքների, նրա կարգադրութիւնների և կուսակցական ղերեկտիւների կատարման վրա հանդիսանում է բոլորակարգ միջոցների և քաջքուկների դեմ պայքարի վոչ միայն կարեւորագույն միջոցներից մեկը, այլ և այնպիսի մի կարեւոր միջոց, վորն ապահովում է բոլոր խորհրդային որգանների աշխատանքի ճիշտ դասակարգային գիծը: Հեղափոխական որինականութեան կատարման ու հետապնդման վերաբերմամբ սիստեմատիկ ստուգում սահմանելը՝ կուսակցական, տնտեսական ու խորհրդային բոլոր աստիճանի որգանների կարեւորագույն նպատակը պիտի լինի: ԿՎՀ—ԲԳՏ պետք է ել ավելի մեծ չափով, ինչպես այդ նախատեսված է ԲԳՏ աշխատանքի պլանով, իր աշխատանքի կենտրոնը դարձնի ստուգման կատարումը, վորպեսզի այդպիսով վոչ միայն արագ ու ճշգրիտ կատարվեն կուսակցական ղերեկտիւներն ու կառավարական վորոշումները, վերացվեն ղերեկտիւները չկատարելու պատճառները, այլ և ստուգվեն գործնական կյանքում այդ ղերեկտիւների ճշտութիւնը:

Կուսակցական ու խորհրդային տեղական որգանները պարտավոր են անշեղ կերպով կատարել կուսակցական և կառավարական ղերեկտիւներն ու կարգադրութիւնները, միաժամանակ կենտրոնական որգանների առաջ հարց դնելով այն բոլոր փոփոխութիւնների մասին, վորոնց անհրաժեշտութիւնը յերևան է գալիս տեղական փորձով: Կենտրոնի կարգադրութիւնների միայն այդպիսի փոխադարձ վերահսկողութիւնը տեղերի պրակտիկայով և տեղերի պրակտիկան կենտրոնի ղեկավարութեամբ՝ թույլ կտա վոչ միայն իրականացնելու կենտրոնական հիմնարկութիւնների առաջարկների ու վորոշումների անշեղ կատարումը, այլ և մտցնելու նրա մեջ անհրաժեշտ ուղղումներ տեղական փորձի ցուցումների համաձայն:

Բոլոր այս աշխատանքի մեջ անհրաժեշտ է յեղնել Լենինի հետեյալ ցուցումներից.

«Ստուգել մարդկանց և ստուգել գործի փաստական կատարումը—սրա մեջն է, կրկին սրա մեջը, միմիայն սրա մեջն է այժմ ամբողջ աշխատանքի, ամբողջ քաղաքականութեան առանցքը» (Մետաղագործների համառուսական համագումարի կոմունիստական Ֆրակցիայի նիստին արտասանած ճառից, 1922 թ. հատ. XVIII, մասն II, էջ 17):

Կատարման ստուգման փորձը և տեղական փորձը պետք է հիմք ծառայեն սիստեմաբար վերաշինելու ու բարելավելու պետական ու տնտեսական ամբողջ ապարատը:

2. Կատարողների միջև աշխատանքների ճշտրիտ բաշխման և յուրաքանչյուր որգանի, ինչպես և խորհրդային ամեն մի պաշտոնում պտնվող անձի պատասխանատւութեան սահմանումը վորոշ առաջադրութիւնների և գործնական աշխատանքների կատարման համար, հանդիսանում է ապարատի աշխատանքի բարելավման և կատարումն ստուգելու լիակական հնարավորութեան ապահովութեան ամենակարեւոր պայմաններից մեկը: Պետք է կտրուկ կերպով վերջ տալ

մինչև այժմ ել չափազանց տարածված այն բանին, վոր համապատասխան մարմինը և մարմնի ներսում համապատասխան կատարողն իր իրավունքների ու պարտավորությունների սահմաններում գանվող հարցերի լուծումը փոխարինում է բազմաթիվ անպատասխանատու թե միջվարչական և թե ներվարչական հանձնաժողովների վորոշումներով, վորչափով կառավարչության հարցերի լուծման նման մեթոդը վոչ միայն բանվորական լայն մասսաներին կառավարչության մեջ ներս քաշելու յեղանակ չի հանդիսանում, այլ և արգելք է լինում դրան, պետական ապարատի աշխատողների փոխադարձ ապահովագրությունը ստեղծելով կատարյալ անպատասխանատվություն նրանց համար, ապարատն անմատչելի դարձնելով լայն մասսաների հսկողությունը, վոչնչացնելով կատարումն իսկապես ստուգելու ամեն մի հնարավորություն: Անհրաժեշտ է «անողք պայքար տիրող անորոշության դեմ այն հարցում, ինչ վոր յուրաքանչյուրին առանձին հանձնարարված է, ինչպես և այստեղից բղխող կատարյալ անպատասխանատվության դեմ...» (Լենին: Վորոշում տեղակալների աշխատանքի մասին: Ժողովածու «Պետապարատի բարելավման մասին», եջ 78):

3. Բանվորական լայն մասսաներին կատարման ստուգմանը մասնակից դարձնելը և այդպիսով բանվորների ու գյուղացիների նոր խավերին պետական կառավարչության գործին վարժեցնելը հանդիսանում է այն պայմանը, վորպեսզի կատարման ստուգումը խորհրդային ապարատի բարելավման ավելի ու ավելի մեծ չափով իսկական մեթոդը դառնա: Այդ պատճառով անհրաժեշտ է.

ա) սկսել ձեռնարկությունների ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովների որինակով, վորոնց փորձը միանգամայն արդարացրեց իրենց, ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովների կազմակերպումը հիմնարկություններ

րում և արագացնել Պրոֆմիությունների VIII համագումարի վորոշումը կյանքի մեջ կիրառելը՝ տրեստներում բանվորական ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովներ ստեղծելու մասին: Հանձնաժողովները պետք է ընտրվեն անմիջական կերպով ֆաբրիկա-գործարանային ձեռնարկություններում և համապատասխան քաղաքների խորհուրդությունների կողմից: Հանձնաժողովների գլխավոր խնդիրները պիտի լինեն խորհրդային որենքների և կուսակցական դերեկտիվները կատարման ստուգումը և դրա հետ զուգընթաց բյուրոկրատիզմի ու քաղքուկների կոնկրետ դեպքերի հայտարարումը, այնպիսի միջոցների մշակումը, վորոնք ապահովում են ապարատի աշխատանքի բարելավումը, մասնավանդ աշխատավորների լայն մասսաներին սպասարկելու բնագավառում:

բ) հետևել, վորպեսզի պահպանվի յուրաքանչյուր ընտրական անձի՝ ընտրողների ժողովների կողմից յետ կանչելու իրավունքը, վորի աշխատանքի ստուգումը հաստատել է նրա անպետք լինելը ընտրողների կողմից նրան հանձնարարված աշխատանքը կատարելու գործում: Այն դեպքում, յեթե այդպիսի մի աշխատող ընտրված անձնավորություն չէ, անհրաժեշտ է կիրառել վորչափ կարելի յե՝ լայն կերպով և ամեն կերպ պաշտպանել բանվորների ու աշխատանքի գյուղացիների նախաձեռնությունը, վորոնք բարձր մարմինների առաջ հարց են դնում՝ նրան յետ կանչել, հեռացնել կամ տեղափոխել:

գ) վերահսկողություն շատությունը վոչնչացնելու նպատակով կոնֆերենցիան ամբողջությամբ վավերացնում է ԲԳՏ 1928 թ. մայիսի 30-ի վորոշումը վերահսկողություն կատարելու կարգի մասին և պարտավորեցնում է ԲԳՏ տարածել այն վերահսկողություն յեթարկվող բոլոր մարմինների ու հիմնարկությունների վրա և խիստ հետևել այդ վորոշման իրագործմանը:

Խորհրդային ապարատի անձնակազմի բարելավումը.

1. Խորհրդային ապարատի անձնական կազմը բարելավելու նպատակով կոնֆերենցիան առաջարկում է Բանվորա-Գյուղացիական Տեսչությանը, պրոֆմիուսթյունների մասնակցությունը և բանվորների, գյուղացիների ու ծառայողների լայն մասսաների հսկողություն տակ, կազմակերպել Խորհրդային ապարատի գոտում աշխատեցնող տարրերից (վորոնք խեղաթյուրում են խորհրդային որենքները, միանում-հարմարվում են կուլակի ու նեպմանի հետ, խանգարում են պայքարել քաղքուկներին և նրանց ծածկողներին դեմ, ամբարտաժան, չինովնիկական ու բյուրոկրատական վերաբերմունք են ցույց տալիս դեպի աշխատավորության առողջա կարիքները), ինչպես և վատնիչներին, կաշառակերներին, գործընդունողներին, վնասարարներին, ծուլելից: Յեւնելով այն բանից, վոր կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը ամեն կերպ թանկ են դնահատում և խրախուսում են յուրաքանչյուր աղնիվ ու բարեխիղճ աշխատողի, գոտումը պետք է տեղի ունենա ամենից առաջ և զխավորապես աշխատանքի վորակի գնահատման հիման վրա, և վոչ միմիայն դասակարգային ծագման նշաններով: Պրոլետարական ծագումն ու կոմունիստական կուսակցություն պատկանելը վոչ մի դեպքում չպիտի ապահովեն մարդկանց գոտումից: Յեւ առաջին հերթին 1929 թվականին կատարել այն բոլոր հիմնարկությունների գոտումը, վորոնք անմիջապես կապված են աշխատավոր մասսաների հետ (հողային ու դատական որգանները, Ֆինոդկոմատի ու Աշխոդկոմատի որգանները և այլն):

Այն անձանց նկատմամբ, վորոնք գտման հանձնաժողովի կարծիքով կարող են դեռ ուղղվել, կիրառել ավելի ցածր պաշտոնի մեջ փոխադրելու փորձը: Իսկ այն գտվող-

ներին նկատմամբ, վորոնք զրկվում են խորհրդային ապարատում աշխատելու իրավունքից (վորոչ ժամանակով, իսկ ավելի խիստերը՝ ընդմիշտ), պետք է վնասական կերպով արգելվի նրանց ընդունելությունը մի այլ պաշտոնում և այլ հիմնարկության մեջ, և նրանց անվանացուցակը պետք է հրապարակվի մամուլում՝ ի զիտություն բոլորի:

2. Կոնֆերենցիան ընդգծում է խորհրդային ապարատից զտվողներին փոխարինելու առանձին կարևորությունը այնպիսի նոր բնակազմերով, վորոնք սնվել-ածել են ֆարիկաներում ու գործարաններում և խորհրդային ստորին աշխատանքում:

Վորչափով վերջին տարիներս մի շարք դեպքերում առաջ քաշելու գործի անաշող ու անբավարար տանելու հիմնական պատճառները հանդիսանում են ապարատի ընդդիմադրությունը, կուսակցական ու խորհրդային որգանների կողմից ուշադրության բացակայությունը դեպի առաջ քաշվածներին նախապատրաստությունը, առաջ քաշվածներին ցույց տրվող անբավարար ոգնությունը հիմնարկությունների դեկավարների կողմից, առաջ քաշվածների թույլ կապը նրանց առաջ քաշող ձեռնարկությունների հետ, առաջ քաշվածներին անաշող և հաճախ պատահական ընտրությունը, վորոնք չեն համապատասխանում պետական կառավարչություն աշխատանքի վերաբերմամբ դրված պահանջներին, բնակազմերի պակասությունն առաջ քաշելու համար մի շարք յետամնաց ուսյոններում, կոնֆերենցիան վորոշում է.

ա) Պարտավորեցնել կոմունիստական բջիջներին ու տեղկոմներին՝ խորհրդային հիմնարկություններում սահմանելու սխտեմատիկ դիտում առաջ քաշվածների ընդունելության և հետագա աշխատանքի վրա, ցույց տալով նրանց ամեն տեսակ ոգնություն և վճռական հակահարված տալով ապարատի բյուրոկրատական տարրերին, վորոնք ընդդիմադրում են առաջ քաշվածներին:

բ) Առաջարկել կուսակցական, խորհրդային, տնտեսական ու պրոֆմիուեթենական որգաններին՝ կազմակերպելու ամենուրեք առաջ քաշվողների (ըստ հնարավորին՝ նախնական) նախապատրաստութիւնը և նրանց ուսուցումը՝ համաձայն նրանց վրա դրվող աշխատանքի, միաժամանակ ապահովելով աշխատող առաջ քաշվածների վերաբերմամբ նրանց տեսական ու գործնական վորակման հետագա բարձրացման հնարավորութիւնը:

գ) զննել հիմնարկութիւնների ղեկավարների վրա անձնական պատասխանատվութիւնը՝ իրենց յենթակա ապարատում բարենպաստ պայմաններ ստեղծելու առաջ քաշվածների աշխատանքի համար:

դ) առաջարկել կուսակցական և պրոֆմիուեթենական որգաններին, վորպեսզի մշտական ու ամուր կապ հաստատվի առաջ քաշվածների և նրանց առաջ քաշող ձեռնարկութիւնների միջև, կենտրոնացնելով այդ աշխատանքը ֆարգործկոմներում, իսկ խոշոր ձեռնարկութիւնների մեջ՝ ցեխերում:

յե) պարտավորեցնել կուսակցական, խորհրդային ու պրոֆմիուեթենական որգաններին՝ առանձնապէս խնամքով զննելու առաջ քաշվողների ընտրութիւն գործը խորհրդային ապարատի մեջ այնպիսի բանվորների մտցնելու համար, վորոնք իսկապէս պատրաստ և ընդունակ են պայքարելու բյուրոկրատիզմի դեմ, լայն բանվորական մասսաներին մասնակից դարձնելով ամենաակտիվ կերպով այդ ընտրութիւն մեջ (թեկնածուների նշումը առաջ քաշելու համար բանվորական ժողովներում և այլն) և ընտրելով առաջ քաշվածներին վոչ թե «աշխատանքի համար ընդհանրապէս», այլ կոնկրետ, նախորդ վորոշված աշխատանքի համար, նկատի ունենալով, վոր առաջ քաշվողի ընդունելութիւն հարցի վերջնական վորոշումն՝ աշխատանքի համար այս կամ այն հիմնարկութիւն մեջ՝ պատկանում և հիմնարկութիւն կամ ձեռնարկութիւն ղեկավարին:

զ) պարտավորեցնել արդյունադործական շրջանների կուսակցական ու խորհրդային որգաններին՝ ուժեղացնելու կազմակերպչական ու քաղաքական ոգնութիւնը գյուղատնտեսական շրջաններին, պատրաստելով նրանց համար առաջ քաշվածների բնակազմեր և ուղարկելով աշխատողներ մշտական ու ժամանակավոր աշխատանքի համար: Այդպիսի ոգնութիւնը պետք և իր հիմքում ունենա բանվորական կենտրոնների պետական ու կոոպերատիվային որգանների մասնակցութիւնը այլ ուայոնների գյուղական տնտեսութիւն վերելքի գործում, որինակ, բանվորական կոոպերացիայի մասնակցութիւնը գյուղատնտեսական կոոպերացիայի աշխատանքում՝ թե գյուղատնտեսական արտադրանքների մթերման և թե գյուղական տնտեսութիւն համապատասխան ձյուղերի զարգացման բնագավառում, կանեփի արդյունարբութիւն մասնակցութիւնը կանեփարուծական ուայոնների վերելքի գործում և այլն:

ե) նկատի առնելով այն բոլոր յերիտասարդներին ճիշտ և լիովին կերպով ոգտագործելու առանձին կարևորութիւնը, վորոնք ավարտել են խորհրդային բարձրագոյն դպրոցական հաստատութիւնները, նրանց բաշխումը՝ աշխատանքի բոքսայի փոխարեն՝ կատարել Աշխտողկոմատի ընդհանուր հսկողութիւնը և ղեկավարութիւնը համապատասխան վարչական որգանների միջոցով, վորի տնորինութիւն տակ պետք և գտնվի բարձրագոյն դպրոցական հաստատութիւններն ավարտելուց անմիջապէս հետո ամբողջ յերիտասարդութիւնը և վորոնց վրա պարտականութիւն պիտի դրվի՝ նրանց բաշխել ըստ պլանի տնտեսական ու կուլտուրական ֆրոնտի զանազան ձյուղերի պահանջների համաձայն:

3. Պարտավորեցնել խորհրդային որգաններին՝ զննելու, վորպէս հիմնական խնդիրներից մեկը, ապարատի կազմի սիստեմատիկ ուսումնասիրութիւնը և հաշվառքի ու աշխա-

անողները ընտրուելոյան գործի կազմակերպումը կենսակովմի համապատասխան դիրեկտիվները հիման վրա:

4. Փորձը ցույց է տալիս, թե այն կոմմունիստները, վորոնք չեն սովորել և չեն ել կամենում սովորել լրջորեն կառավարելու գործը, վորոնք աշխատում են վայրիվերո, առանց թափանցելու իրենց հանձնված գործի ելուելոյան մեջ, մի շարք դեպքերում պոչի յեն վերածվում և խելոք սաբոտաժնիկների ու վլասարարների համար ծառայում են վորպես շիրմա: Այդպիսի կոմմունիստները, վորոնք յերևակայում են՝ իբր թե իրենք ղեկավարում ու կառավարում են, իրք հանդիսանում են ուրիշների մտքերն ու առաջարկները դրոշմող կեղծ-կոմմունիստներ, և չափազանց մեծ վլաս են հասցնում սոցիալիստական շինարարուելոյան գործին: Վորպես հերթական կարևորագույն խնդիր հանդիսանում է այն բանի ստուգումը, թե ինչպես են աճում անտեսական բնակազմերը, ինչ չափով կոմմունիստները վերածվում են իսկական ղեկավարների, նրանց հանձնված գործի իսկական տերերի, վորոնք կարողանում են մարդկանց ընտրուելոյն կատարել և ստուգել նրանց աշխատանքը, վորոնք մասնագրիտանում են համապատասխան արտադրական բնագավառում և բարձրացնում են իրենց արտադրատեխնիկական վորակումը, — այն բանի ստուգումը, թե ինչ չափով են կատարվում կենսակովմի վորոշումները՝ ստեղծելու կոմմունիստ անտեսավարների՝ աճման համար նպաստավոր պայմաններ, ամեն կերպ ոգնուելոյն ցույց տալու վորակի բարձրացման գործում և նրանց ամենորյա աշխատանքում (վերապատրաստուելոյն, տեխնիկական գրականուելոյան մատակարարում, գործուղումներ արտասահման, պարբերաբար մեկյերկու ամսով ազատվելը ընթացիկ աշխատանքից՝ մասնագրիտանալու նպատակով, անտեսավարների հիմնական ղեկավար կազմի հարափոփոխուելոյան վերացումը և այլն):

Այդպիսի ստուգումը կհետացնի կոմմունիստ անտեսավարների ու վարչական պաշտոնյաների իսկական ընտրուելոյան հնարավորուելոյնը, վորոնք կարող են աշխատել և պատասխանատու լինել իրենց գործի համար:

Այն կոմմունիստների նկատմամբ, վորոնց աշխատանքի ստուգումը պարզում է իրենց անպետք լինելը պետական կառավարուելոյան գործի համար, անհրաժեշտ է ամենավեճական կերպով դադարեցնել այդպիսի աշխատողներին հիմնարկուելոյնից հիմնարկուելոյն, ուսյոնից ուսյոն փոխադրելու ալժմ ել գործածվող պրակտիկան, վորը միայն վերջնականապես կործանում է նրանց և միաժամանակ խանգարում ապարատի աշխատանքի բարելավումը, և հենց այս պատճառով ել հարկավոր է աշխատել, վոր նրանք անպայման վերադառնան իրենց մասնագրիտական աշխատանքին:

III.

Կառավարչական սխեսմի համապատասխանեցումը մեր սնեսուելոյան սխեսմից յեվ ալն պահանջերից, վոր առում է սոցիալիստական շինարարուելոյնը.

Խորհրդային յերկրի առաջ ծառայած խնդիրների իրականացումն արգյունադործուելոյան արագացարած թափը և գյուղական անտեսուելոյան սոցիալիստական վերակառուցումն իրագործելու բնագավառում պահանջում է սխտեմաբար վերափոխել պետական կառավարչուելոյան ամբողջ ապարատը, նրան մեր անտեսուելոյան սխտեմի և սոցիալիստական շինարարուելոյան խնդիրների հետ համաձայնեցնելու իմաստով: Այդ բանը նկատի առնելով՝ կոնֆերենցիան վորոշում է.

1. Վերջին տարիներս գործնական աշխատանքում ըստուգված բնակազմերի անկասկած աճումը, յերկրի ավարտվող ուսյոնացումը, կուտակվող փորձառուելոյնը ժողովրդական անտեսուելոյան կառավարչուելոյան բնագավառում, ժո-

ղովըդական տնտեսութեան զարգացման հնգամյա պլանի մշակումը—հնարավոր են դարձնում կառավարչութեան անհ լիքների ապակենտրոնացման, հետագա քայլերը՝ միութենական և կենտրոնական հանրապետական որգանների աշխատանքների թեթևացնելը վոչ միայն բազմաթիվ մանր-մուկը գործերից, այլ և ոպերատիվ ֆունկցիաների մի վորոշ մասից, պլանային աշխատանքի իսկական բարելավումը վորն ապահովում է թե ոեալ և ճիշտ ժամանակին ներկայացված պլանների մշակումը և թե հասարակական ու անհատական մասսայական նախաձեռնութեան ու ինքնագործունեյութեան անհրաժեշտ կապը ամուր դիսցիպլինայի հետ կենտրոնական որգանների պահանջների ու պլանների իրականացման ասպարիզում:

Ապարատի սիստեմատիկ վերափոխումը պիտի ընթանա ոպերատիվ ֆունկցիաների ապակենտրոնացման գծով, միաժամանակ կենտրոնացնելով պլանացումն ու ղեկավարութեյունը հիմնական հարցերում, այնպիսի պայմաններ ստեղծելու գծով, վորոնք ապահովում են թե հաստատուն ու իր ժամանակին ներկայացված պլանների մշակումը և թե նրանց լրիվ կատարումը:

Այս հիման վրա, մասնավորապես, ԽՍՀՄ ԲԳՏ ժողկոմատը անհրաժեշտաբար պետք է վերաքննի աշխատանքների շրջանը և փոխհարաբերութեյունների այն սիստեմը, վոր գոյութեյուն ունի զանազան միութենական ժողկոմատների միջև, զաշնակից հանրապետութեյունների ժողկոմատների և միութեյան ժողկոմատների միջև, ժողկոմատների և կարգավորող օրգանների միջև, յերկրային և կենտրոնական որգանների միջև:

2. Արդյունագործութեյունն ու տրանսպորտը կառավարելու սիստեմի բարելավման աշխատանքում պետք է յեկնել այն բանից, վորպիսզի կարելի լինի ապահովել՝

ա) ժողովրդական Տնտեսութեան Բարձրագույն Խորհրդի և ՃՃԺԿ վերածումը վոչ միայն պլանային-տնտեսական ղեկավարութեան որգանների, վորպիսիք նրանք հանդիսանում են առավելապես մինչև այսօր, այլ և իսկական տեխնիկական ղեկավարութեան որգանների, հիմնված թե ամբերիկական ու յեվրոպական և թե խորհրդային գիտութեյան ու տեխնիկայի նվաճումերի վրա:

դ) Ֆաբրիկաների, գործարանների ու առանձին ցեխերի տնտեսական ձեռներեցութեան ուժեղացումը, միաժամանակ ուժեղացնելով նաև տրեստի դերը ձեռնարկութեյունների տեխնիկական վերակառուցման և տրեստների ձեռնարկութեյունների խմբերի այնպիսի վերազննութեյան բնագավառում, վորն ապահովեր ձեռնարկութեյունների միացման սկզբունքի իրականացումը ամենից առաջ ըստ մասնագիտացման նշանի:

զ) արդյունագործութեյան ներքին ոեսուերաների լիակատար մոբիլիզացիայի հնարավորութեյունը:

զ) կուսակցական դիրեկտիվների իրականացումը ձեռնարկութեյունների կառավարչութեյան մեջ միանձնութեյուն սահմանելու մասին, միաժամանակ և անշեղ կերպով ծավալելով արտադրական խորհրդակցութեյունների և ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովների աշխատանքը, վորոնց գործնական առաջարկները, վորչափով այդ առաջարկները ճանաչված են ճիշտ և ընդունելի յեն ազմինիստրացիայի կողմից, պետք է իրականանան անշեղ կերպով նրանց կողմից՝ առանց ձգձգումների: Ձեռնարկութեյունների ղեկավարութեյան սիստեմը պետք է վորոշվի ընկ. Լենինի հետևյալ ցուցումով:

«Վորչափ ավելի վճռականորեն մենք պետք է կանգնենք այժմ ի պաշտպանութեյուն անողոք ու հաստատուն իշխանութեյան, և պաշտպանենք առանձին անձանց դիկտատուերայի՝ աշխտանքի վորոշ պրոցեսսների համար, զուտ

կատարողական ֆունկցիաների վորոշ մոմենտներին, այն-
չափ ավելի զանազանատեսակ պիտի լինեն ներքևից բլիսող
վերահսկողութեան ձևերն ու յեղանակները, վորպեսզի վերա-
ցնենք խորհրդային իշխանութեան խեղաթուրման հնարա-
րավորութեան յուրաքանչյուր ստվեր, վորպեսզի պոկենք
կրկնակի ու անխոնջ կերպով բյուրոկրատիզմի վորոմն»:

(Լենին, «Սորհրդային իշխանութեան հերթական խըն-
դիրները», հատ. XV, էջ 323—224).

յե) շինարարութեան ճիշտ ժամանակին և լիովին տեխ-
նիկական-տնտեսական նախապատրաստութեանը:

զ) ղեկավարող կազմի տոկունութեանը արդյունագոր-
ծութեան մեջ և տնտեսավարների մի տեղից մյուս տեղ կա-
տարվող և չափազանց լայն կիրառումն ստացած տեղափո-
խութեանները լիկվիդացիան, վորոնք ծայր աստիճան զըժ-
վարացում են նրանց ուսուցման և նրանց տեխնիկական
վորակավորման մակարդակի բարձրացման հնարավորու-
թեանը:

3. Ապրանքներ անց կացնող ապարատի բարելավ-
ման և ռացիոնալացման աշխատանքում պետք և յեղնել
ապրանքների շրջանառութեան ծախսերի հետագա վեճա-
կան կրնատման անհրաժեշտութեանը ու հնարավորու-
թեանից:

Նկատի առնելով այն հանգամանքը, վոր մի շարք ապ-
րանքների առևտրական ապարատի մենաշնորհ դրութեանը,
կանոնավորող և առևտուր անող որգանների ավելի ցենտ-
րալիզմի ղեկավարում, ապարատի առանձին մասերի բյուրոկ-
րատական փչացման վտանգ և սպառնում, անհրաժեշտ և
ապրանք անց կացնող ապարատի ռացիոնալացումը իրա-
գործել ոպերատիվ ֆունկցիաների հնարավոր ապակենտրո-
նացման տեսանկյան տակ, միաժամանակ պահպանելով և
բարելավելով կենտրոնացրած ղեկավարութեանը ֆինանս-
ների ու առևտրի պլանացման բնագավառում, առևտրական

սիստեմի գործառնական ընդունակութեան բարվոքման, ար-
դյունագործական ապրանքները ֆարրիկաներից ղեկի ըս-
պառողը տանող և գյուղատնտեսական հում նյութերն ար-
տագորդից ղեկի նրա սպառողը տանող ողակների իրական
կրճատման բնագավառում, բնակչութեան սպառողական
պահանջն արդյունագործական և առևտրական ապարատի
կողմից հաշվառքի առնելու ընդունակութեան բարձրացման
և սպառողին սպասարկելու վորակի բարելավման բնագավա-
ռում թե ստորին առևտուր անող որգանների ցանցն արագ
ընդարձակելու և թե նրանց աշխատանքի տեխնիկական բա-
րելավելու միջոցով:

4. Պետք և շարունակել աշխատանքը բարելավելու
ժողովրդական տնտեսութեան՝ ֆինանսավորման և վարկա-
վորման, հարկումի, ֆինանսական հաշվետեսութեան փոխ-
հարաբերութեանների սիստեմները՝ տնտեսական, կոոպերա-
տիվային և վարկային հիմնարկութեանների միջև՝ վոչ-ա-
պառիկ հաշվետեսութեանը նրանց մեջ ամրացնելու նպա-
տակով, ինչպես և ավելորդ հաշվետես ինստանցիաների վըճ-
ռական կրճատման սիստեմները արդյունագործութեան զա-
նազան ճյուղերի միջև, արդյունագործութեան ու կոոպե-
րացիայի միջև և այլն, պետք և նաև հետզհետե ավելի լայն
տարածել անփող հաշվետեսութեանների կազմակերպման
փորձը բնակչութեան մասսայական այն բոլոր վճարումների
բնագավառում, վորոնք կատարվում են պետական, կոմուն-
նալ և հասարակական կազմակերպութեաններին:

5. Պետք և ապահովել, վորպեսզի մեր ապարատն ըստ
կարելիվոյն արագ յուրացնի կառավարչութեան տեխնիկայի
բնագավառում ձեռք բերված նվաճումները. որինակ՝ պետք և
տարածել առաջիկա տարիներում բոլոր փոքր ի շատե խո-
շոր տնտեսական հիմնարկութեաններում հաշվառքի մեքե-
նայացումը (վորի կիրառման փորձերը տրանսպորտում,
բրդի 1-ին տրեստում, Համ. Տեքստիլ սինդիկատում, Գիտի

գործարաններում և այլն արդեն տվել են զբաղված հետև-
վանքները)։ պետք է հաշվապահական, ուղերատիվ ու վիճու-
կագրական հաշվառքի մեջ միասնություն մտցնել, հաշվե-
տվության սխտեմ սահմանել սկզբնական հաշվառքի տըվ-
յալներին հիման վրա և պլանների ձեվերի համաձայն։ պետք
է բարելավել հիմնարկությունների կազմը նրա առանձին
մասերի ճշգրիտ ֆունկցիաների սահմանները վորոշելու,
միջանկյալ ավելորդ ինստանցիաների լուծարքի, պատաս-
խանատու կատարողների սխտեմ սահմանելու ուղղությամբ
(մասնավորապես պետք է սահմանել, վորպեսզի կատա-
րողն ինքն անմիջապես զեկուցում տա իր կատարած աշ-
խատանքի մասին այն որդանին կամ անձնավորությանը,
վորի համար ել նշանակված է տվյալ աշխատանքը։ պետք է
զեկուցողն ինքն ստորագրի պարտադիր կերպով իր պատ-
րաստած բոլոր զեկուցումներն ու թղթերը, անկախ այն
հանգամանքից, թե այդ թղթերն ո՛ւր են ուղարկվում),
պետք է արագացնել, վորպեսզի ամենուրեք մտցվի գործա-
վարության պարզացրած սխտեմը։ պետք է ամրապնդել
հները և ստեղծել նոր գիտական հիմնարկություններ ու
ուսցիոնալացման կենտրոններ, վորոնք աշխատեն կառա-
վարչության տեխնիկայի բնագավառում։ պետք է տարա-
ծել ուսցիոնալացման հատուկ բյուրոներ ստեղծելու փորձը՝
խորհրդային հիմնարկություններին կից, ստեղծել ուսցիո-
նալիզատորների բնակազմեր և այլն։

Տեխնիկայի բոլոր այս բարելավումները բնավ չեն
հանդիսանում ինքնանպատակ, — նրա ոգնությամբ մենք
պիտի հասնենք ապարատի այնպիսի պարզացման, վորը
հեշտացնի մասսաների ախտիվ մասնակցությունը կառա-
վարչության մեջ։

6. Առանց հետազայում մտցնելու գիտական ուսցիոնա-
լացման մեթոդները արտագրության, պլանացման և կա-
ռավարչության բոլոր ճյուղերում, չափազանց կզժվարանա

յերկրի առաջ ծառայած խնդիրների իսկական իրականա-
ցումը։

Հաշվի առնելով պլանային աշխատանքի բարդու-
թյունը, դժվարություններն ու հետզհետե ավելացող պա-
տասխանատվությունը վերակառուցման շրջանում, անհրա-
ժեշտ է ամեն կերպ ուժեղացնել մեր տնտեսական պլա-
նացման գիտական բնույթն ու բազմակողմանի գիտական
հիմնավորումը։ Այդ բանին համապատասխան՝ Պետպլանը
պետք է հենվի ժողովրդա-տնտեսական պլաններ կազմելու
աշխատանքում համաշխարհային գիտության ու տեխնիկայի
նորագույն նվաճումների լայն ծանոթացման և ՆՍՀՄ գի-
տական-հետազոտական հիմնարկությունների և կազմակեր-
պությունների ամբողջ սխտեմի վրա, վորոնց աշխատանքը
բնույթով ու ժամկետերով պետք է կապակցվի պլանային
աշխատանքի խնդիրների հետ։ Գիտական-ուսցիոնալացման
աշխատանքի կիրարկման փորձը ինչպես ԲԳՏ գծով, այն-
պես և ԺՏԳՆ գծով ցույց է տալիս, թե արտագրության
մեծուցման և ինքնարժեքի իջեցման ինչպիսի հսկայական
հնարավորություն է բաց անում կյանքի մեջ գիտական-
հետազոտական աշխատանքի և ուսցիոնալացման միջոցա-
ռումների իրականացումը։ Ինչպես ԲԳՏ, այնպես և բոլոր
ղեկավար տնտեսական որդաններն անհրաժեշտաբար ավելի
մեծ մասշտաբով, քան այդ յեղել է մինչև այժմ, պետք է
բարձրացնեն իրենց աշխատանքի գիտական հիմքը։ Դրա
համար անհրաժեշտ է մասնավորապես՝ ստեղծել ուսցիոնա-
լացման հատուկ խմբերի, բյուրոների, գրասենյակների և
հիմնարկությունների ընդարձակ ցանց, շարունակել գործի
հրավիրել ոտարյերկրյա մասնագետների, մեծացնել տեխնի-
կական գրականության հրատարակությունը, նախապատ-
րաստել մասնագետ - ուսցիոնալիզատորների բնակազմեր,
բարձրացնել տնտեսավարների բնակազմերի տեխնիկական
փորակի մակարդակը և այլն, և այլն։ Կոնֆերենցիան ընդ-

դժուժ է, վոր իր ապարատի ռացիոնալացումը հանդիսանում է յուրաքանչյուր հիմնարկութեան, և վո՛չ թէ միմիայն ԲԳՏ որգանների պարտադիր ու մշտական ֆունկցիան, և ալդ խնդրի իրականացման պատասխանատուութեան ընկնում է ամենից առաջ հիմնարկութեան ղեկավարների և աշխատողների վրա, ինչպես և նրանց հասարակական հիմնարկութեանների վրա:

7. Պետք է ուժեղացնել պայքարը հոգուտ խնայողութեան ռեժիմի, հոգուտ ամեն տեսակի վերադիր ու անարտադրական ծախսերի կրճատման, ինչպես կառավարչութեան սիստեմը՝ զարգացած սոցիալիստական եկոնոմիկայի պահանջների հետ համաձայնեցնելու, այնպես և կառավարչութեան իսկական առաջնակարգ տեխնիկայի յուրացման հիման վրա: Կոնֆերենցիան յեղնում է այն բանից, վոր սոցիալիստական շինարարութեան հնգամյա պլանի իրագործման կարևորագույն պայմաններից մեկը հանդիսանում է առևտրի, արդյունագործութեան վերադիր ծախսերի և վարչական ծախսերի հետագա անշեղ ու վճռական կրճատումը, վորը պիտի հանդիսանա մեր յերկրի զարգացման տեմպի փութացման և յական աղբյուրներից մեկը՝ համեմատած զարգացման կապիտալիստական տեմպի հետ:

Կոնֆերենցիան տնտեսական բոլոր որգանների և Բանվորա-Գյուղացիական Տեսչութեան որգանների ուշադրութեան է հրավիրում այն բանի վրա, վոր հոգուտ խնայողութեան ռեժիմի մղվող պայքարը միմիայն ապարատի կրճատմամբ չպիտի սահմանափակվի, — նա պահանջում է միաժամանակ մաքսիմալ ջանքեր թափել՝ իրապես ռացիոնալացման յենթարկելու արտադրութեանը, յիովին ոգտագործելու և մորիլիզացիայի յենթարկելու գոյութեան ունեցող սարքավորումը, բարձրացնելու կատարվող հիմնական ծախսերի իսկականութեանը, իջեցնելու ինքնարժեքը, այնպես կազմակերպելու արդյունագործութեան և տրանսպորտի մատակարարման գործը, վորն ավելորդ պաշարների կուտակման առաջն առնելը, վորոնք նյութական հրակայական ռեսուրսական ռեսուրսները մեռած կապիտալի յեն վերածում (որինակ, տրանսպորտում, վորտեղ շոգեշարժների ու վազոնների ոգտագործման հիմնական չափանիշները հրեշտավոր կերպով ցածր են, ալդ չափանիշների բարձրացումը մինչեւ թեկուզ այն մակարդակը, վորը գոնե վորոշ չափով հասներ այնպիսի յերկրների մակարդակին, վորպիսիք են Ամերիկան, Գերմանիան և Յապոնիան, — վորտեղ մարդատար շոգեշարժն ոգտակար աշխատանքի մեջ է գտնվում որական 14 ժամ մեզ մոտ յեղած 6¹/₂ - 9 ժամի դիմաց, — մի քանի հարյուր միլիոն ռուբլի խնայելու հնարավորութեաններ է տալիս):

8. Պետք է հատուկ ուսումնասիրութեան յենթարկել ռալոնացման արդյունքները՝ ամենից առաջ պետական կառավարչութեան ապարատը բանվորների և աշխատավոր գյուղացիութեան մասսաներին մոտեցնելու տեսակետից:

Վորչափով կարևորագույն կետ է հանդիսանում ռալոնը, վորտեղ իրականացվում են կուտակցութեան և խորհրդային իշխանութեան դիրեկտիվները, ալստեղ պետք է փոխադրել պետական ապարատը բարելավելու և ուղղելու աշխատանքի ծանրութեան կենտրոնը:

Իրա համաձայն էլ պետք է վերաքննվի շրջանային խորհրդային ապարատի կազմը, մատակարարելով ռալոնական կենտրոններին կարելի յեղածին չափ մեծ թվով ստուգված կոմունիստներ, կազմակերպիչներ և մասնագետներ:

Ապարատի կազմութեան պարզացման և բարելավման գործում առանձին ուշադրութեան պիտի դարձվի սոցիալական ապահովագրութեան, առողջապահութեան, դատարանի, կոպերացիայի, աշխատանքի բյուրոյի և այն բոլոր որգանների վրա, վորոնք զբաղված են լայն մասսաներին

անմիջապես սպասարկելու գործով, ապահովելով նրանց այնպիսի կազմութիւնն և աշխատանքի այնպիսի կարգ, վորն ապահովեր աշխատավորներին մաքսիմալ չափով արագ և անընդհատ սպասարկութիւնն և նրանց պահանջները բավարարումն:

9. Բանվորա-Գյուղացիական Տեսչութիւնն առանձին հսկողութիւն տակ պիտի դնել, ընկ. Լենինի կողմից բազմիցս արված ցուցմունքների համաձայն, արդեն առաջիկա տարում 2—3 տրեստի, 5—10 շրջանի և 10—15 ռայոնի որինակելի աշխատանքի կազմակերպումը: Կոնֆերենցիան առաջարկում է կուսակցութիւնն Կենտրոնական Կոմիտեյին յերկու ամսվա մեջ ապահովել խորհրդային աշխատանքի այդ փորձնական բնագավառները իսկապես լավագույն, ամենաստուգված և բարեխիղճ կազմակերպիչներով ու ղեկավարներով: Միաժամանակ անհրաժեշտ է յեւնել այն բանից, վոր վերջին հաշիվով լավագույն նմուշները որինակ դառնան ու պարտադիր բոլորի համար:

10. Վորչափով յերկրի առաջ ծառայած անտեսական, քաղաքական ու կուլտուրական խնդիրների լուծումը պահանջում է միլիոնավոր աշխատավորների անմիջական ու գիտակցական մասնակցութիւնն՝ այդ խնդիրները լուծման գործում, անհրաժեշտ է ել ավելի մեծ չափով կիրառել գործնականում, փորձով ապացուցել, իրախուսել բանվորական ձեռնարկութիւնն ու ինքնագործունեյութիւնն բազմատեսակ ձևերը (բանվորական նախաձեռնութիւններ առաջ բաշված սոցիալիստական մրցակցութիւնն հետագա ծավալումը՝ ինչպես շինարարութիւնն, արտադրութիւնն բարելավման, ինքնարժեքի իջեցման բնագավառում, այնպես և կառավարչութիւնն հոչակման սխտեմի և կառուցվածքի բարելավման ու պարզացման բնագավառում, բանվորական խմբերի առաքումը գյուղ, մրցումները, բանվորական գյուտարարութիւնները և այլն, այլն), լայնորեն լուսաբանելով ձեռք

բերած նվաճումները մամուլում, վորպեսզի ամբողջ յերկիրն իմանա լավագույն որգանների, լավագույն և սոցիալիզմի գործին ամենաանձնվեր, ամենահմուտ և բարեխիղճ աշխատողների աշխատանքի մասին, լայն չափով մրցանակի արժանացնելով բոլոր արժեքավոր առաջարկները, վորոնց կիրառումը կնպաստեր արտադրութիւնն ինքնարժեքի իջեցմանը, ապարատի պարզացմանն ու եժանացմանը:

VI.

Մասսայական կոնսուլի կազմակերպումը.

Բանվորա-Գյուղացիական Տեսչութիւնը, վորպես կուսակցութիւնն և Խորհուրդների կարեւորագույն լծակներէց մեկը նրանց մղած կուլում հոգուտ ամբողջ ապարատի իսկական բարելավման, կարող է իրագործել իր առաջ ծառայած խնդիրները միայն այն դեպքում, յեթե նա շարունակ մեծ չափերով մասնակից դարձնի բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարում աշխատավորների իսկական լայն մասսաներին, յեթե նա ել ավելի մեծ չափերով դառնա այն բոլոր բանվորների ու գյուղացիների կազմակերպիչը, վորոնք իրականացնում են հսկողութիւնը պետական ապարատի վրա, յեթե նա շարունակ ավելի մեծ չափով վերածվի կուսակցականների աշխատանքն անկուսակցականների կողմից ստուգման յենթարկելու կազմակերպութիւնն, յեթե նրա միջոցով անկուսակցական բանվորներն ու գյուղացիները սովորեն իրականացնել խորհրդային հանրապետութիւնն մեջ նրանց տրված իրավունքները: Յուրաքանչյուր այլ «պայքար բյուրոկրատիզմի դեմ», վորը չի հենվում բանվոր դասակարգի ակտիվութիւննն ու ինքնագործունեյութիւնը, վորը ջանում է իրենց՝ բանվորների ու գյուղացիների հսկողութիւնը փոխարինել միմիայն այս կամ այն, թեկուզ ամենաբարեխիղճ ապարատի գործունեյու-

Թյամբ, վոչ մի լուրջ հետեւանք չի կարող տալ պետական ապարատի իսկական բարեւալման և արմատական վերակառուցման գործում:

Յեղնելով դրանից, կոնֆերենցիան՝

1. Առաջարկում է ԲԳՏ—ԿՎՀ անշեղ կերպով ավելի լայն չափերով մասնակից դարձնել Բանվորա-Գյուղացիական Տեսչության աշխատանքի մեջ բանվորներին, ծավալելով բանվորների ներգրավման յեղանակների արդեն գործնականում փորձված պրակտիկան և դիմելով նորանոր յեղանակների, վորոնք առաջ բաշելին ներքեից յեկող բանվորական նախաձեռնությունը (ԲԳՏ սեկցիաները, պրոֆմիությունները և մասնավանդ արտադրական խորհրդակցությունները, բանվորական ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովների և տնտեսական խորհրդակցությունների մասնակցությունը ԲԳՏ աշխատանքի մեջ, բանվորների կողմից ընտրվածները գանգատների բյուրոյում և ԲԳՏ մեջ, բանթըղթակիցներին աշխատանքի հրավիրելը, գործարաններում և հիմնարկություններում կաաարված հետազոտությունների արդյունքների քննարկությունը բանվորների ու ծառայողների լայն մասնակցությամբ, աշակցության հատուկ խումբակները ստեղծումը, վոր կազմակերպում են ֆարկոմներն ու տեղկոմները ձեռնարկություններում ու հիմնարկություններում, մասսայական հետազոտությունները, բանվորների «հանկարծակի վրա տալը» խորհրդային հիմնարկությունների վրա, կամավորների, կոմյերիտմիության թեթև կավալերիային աշխատանքի հրավիրելը, բյուրոկրատիզմի մեջ մեղադրվողների գործերի քննությունը բանվոր ատենակալների կողմից բանվորական ժողովներում և այլն):

2. Առաջարկում է տեղական կուսորգաններին ու խորհուրդներին ստեղծել քաղաքային բոլոր խորհուրդներին կից և մեծ գյուղերի գյուղական ու վոլոստային բոլոր խորհուրդներին կից ԲԳՏ սեկցիաներ: Գյուղական խորհուրդ-

ներում այդ սեկցիաները պետք է կազմակերպվեն առաջին հերթին բատրակներից ու չքավոր գյուղացիներից:

3. Առաջարկում է Կենտկոմին, նկատի առնելով այն հանգամանքը, վոր ԲԳՏ աշխատանքների համար իսկական լավագույն բանվորներին առանձնացնելու վերաբերմամբ բազմիցս արված ցուցումները կատարվում են վատ, և ի կատարումն ընկ. Լենինի ցուցման՝ Բանգյուղտնտեսչության մեջ այն լավությունը կենտրոնացնելու մասին, «Ինչ վոր կա մեր սոցիալական իրավակարգում» (հատ. XVIII, մասն II. եջ 118), կիրառել առաջիկա յերեք ամսվա ընթացքում իր հսկողության տակ աշխատողների հատուկ մոբիլիզացիա՝ ԲԳՏ մարզային ու շրջանային որգանների աշխատանքների համար: Սրա հետ միաժամանակ ԲԳՏ պետք է ուժեղ կերպով իր ապարատի մեջ քաշի մշտական աշխատանքի համար այնպիսի բանվորները, վորոնք իսկական ընդունակություն և պատրաստակամություն են ցուցահանել՝ պայքարելու բյուրոկրատիզմի դեմ, և այդպիսի բանվորներից դաստիարակի առաջ-քաշվածների բնակազմեր նյլ որգանների համար:

V.

Բյուրոկրատիզմի սարբերի դեմ պայքարի խնդիրները կուսակցության գերում յեվ կուսակցական ապարատում.

Կոնֆերենցիան ամբողջ կուսակցության և կուսակցության յուրաքանչյուր առանձին անդամի ուղադրությունն է հրավիրում այն բանի վրա, վոր անհրաժեշտ է ամենավրճուական, ամենաանձնագոհ, ամենամաառ պայքար մղել բյուրոկրատիզմի այն տարրերի դեմ հենց կուսակցության ներսում, կուսակցական ապարատի ներսում, վոր գոյացել են կուսակցական և խորհրդային ապարատի իրար հյուսվելուց, կուսակցության խոշոր թվով անդամներին վարչական աշխատանքի մեջ տանելուց, կուսակցության վրա

ԹՅամբ, վոչ մի լուրջ հետեվանք չի կարող տալ պետական ապարատի իսկական բարելավման և արմատական վերակառուցման գործում:

Յեղնելով դրանից, կոնֆերենցիան՝

1. Առաջարկում է ԲԳՏ—ԿՎՀ անշեղ կերպով ավելի լայն չափերով մասնակից դարձնել Բանվորա-Գյուղացիական Տեսչության աշխատանքի մեջ բանվորներին, ծավալելով բանվորների ներգրավման յեղանակների արդեն գործնականում փորձված պրակտիկան և դիմելով նորանոր յեղանակների, վորոնք առաջ քաշելին ներքեից յեկող բանվորական նախածնունդները (ԲԳՏ սեկցիաները, պրոֆմիությունների և մանավանդ արտադրական խորհրդակցությունների, բանվորական ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովների և տնտեսական խորհրդակցությունների մասնակցությունը ԲԳՏ աշխատանքի մեջ, բանվորների կողմից ընտրվածները զանգատների բյուրոյում և ԲԳՏ մեջ, բանթըլթակիցներին աշխատանքի հրավիրելը, գործարաններում և հիմնարկություններում կաաարված հետազոտությունների արդյունքների քննարկությունը բանվորների ու ծառայողների լայն մասնակցությամբ, աջակցության հատուկ խմբակները ստեղծումը, վոր կազմակերպում են ֆարկոմներն ու տեղկոմները ձեռնարկություններում ու հիմնարկություններում, մասսայական հետազոտությունները, բանվորների «հանկարծակի վրա տալը» խորհրդային հիմնարկությունների վրա, կամավորների, կոմյերիամիության թեթև կավալերիային աշխատանքի հրավիրելը, բյուրոկրատիզմի մեջ մեղադրվողների գործերի քննությունը բանվոր ատենակալների կողմից բանվորական ժողովներում և այլն):

2. Առաջարկում է տեղական կուսորգաններին ու խորհուրդներին ստեղծել քաղաքային բոլոր խորհուրդներին կից և մեծ գյուղերի գյուղական ու վոլոստային բոլոր խորհուրդներին կից ԲԳՏ սեկցիաներ: Գյուղական խորհուրդ-

ներում այդ սեկցիաները պետք է կազմակերպվեն առաջին հերթին բառարկներից ու չքավոր գյուղացիներից:

3. Առաջարկում է Կենտկոմին, նկատի առնելով այն հանգամանքը, վոր ԲԳՏ աշխատանքների համար իսկական լավագույն բանվորներին առանձնացնելու վերաբերմամբ բազմիցս արված ցուցումները կատարվում են վատ, և ի կատարումն ընկ. Լենինի ցուցման՝ Բանգյուղատնտեսչության մեջ այն լավությունը կենտրոնացնելու մասին, «ինչ վոր կա մեր սոցիալական իրավակարգում» (հատ. XVIII, մասն II. եջ 118), կիրառել առաջիկա յերեք ամսվա ընթացքում իր հսկողության տակ աշխատողների հատուկ մոբիլիզացիա՝ ԲԳՏ մարզային ու շրջանային որգանների աշխատանքների համար: Սրա հետ միաժամանակ ԲԳՏ պետք է ուժեղ կերպով իր ապարատի մեջ քաշի մշտական աշխատանքի համար այնպիսի բանվորների, վորոնք իսկական ընդունակություն և պատրաստակամություն են ցուցահանել՝ պայքարելու բյուրոկրատիզմի դեմ, և այդպիսի բանվորներից դաստիարակի առաջ-քաշվածների բնակազմեր այլ որգանների համար:

V.

Բյուրոկրատիզմի սարբերի դեմ պայքարի խնդիրները կուսակցության ցեղանուններում յեվ կուսակցական ապարատում.

Կոնֆերենցիան ամբողջ կուսակցության և կուսակցության յուրաքանչյուր առանձին անդամի ուղադրությունն է հրավիրում այն բանի վրա, վոր անհրաժեշտ է ամենավրեձական, ամենաանձնագոհ, ամենահամառ պայքար մղել բյուրոկրատիզմի այն տարրերի դեմ ճենց կուսակցության ներսում, կուսակցական ապարատի ներսում, վոր գոյացել են կուսակցական և խորհրդային ապարատի իրար հյուսվելուց, կուսակցության խոշոր թվով անդամներին վարչական աշխատանքի մեջ տանելուց, կուսակցության վրա

պետական ապարատում աշխատող կոմմունիստների միջոցով բուրժուական ինտելիգենցիայի և պաշտոնյության ունեցած ներգործութեամբ: Այդ իսկ պատճառով, բյուրոկրատիզմի տարրերի դեմ պայքար մղելու նպատակով հենց կուսակցութեան ներսում և կուսակցական ապարատում, տարրերի, վորոնք արգելք են հանդիսանում բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարին խորհրդային ապարատում, կոնֆերենցիան վորոշում է.

1. Անշեղ կերպով շարունակել հետազայում ևս կենտրոնական կոմիտեյի կողմից սկսած կուսակցական վճարովի ապարատի կրնատումը՝ փոխարինելով այն համապատասխան մասերում կուսակցական ակտիվի ձրի աշխատանքով, և կուսակցական ակտիվի լայն մասնակցութեանը կուսակցական կոմիտեաների ապարատի անմիջական աշխատանքին, այդ բանն իրականացնելով ավելի համարձակ ու հետևողական կերպով առաջին հերթին բանվորական կենտրոններում:

2. Վերահսկիչ հանձնաժողովներն առանձին ուշադրութեան պիտի դարձնեն ներկուսակցական դեմոկրատիայի խախտման դեմ մղվող պայքարի վրա, անշեղ կերպով պատասխանատվութեան յենթարկելով կուսակցական այն որգաններին և այն պաշտոնատար անձանց, վորոնք արգելք են հանդիսանում կյանքի մեջ կիրառելու ներկուսակցական դեմոկրատիայի սկզբունքները (արտահայտվելու և քվեարկելու ազատութեան ճնշումը ժողովներում, կանոնադրութեամբ չնախատեսված ընտրական սահմանափակումների կիրառումը, կուսակցութեան անդամների ընտրական իրավունքների ծածուկ և բացարձակ խախտումը՝ բյուրոյի կամ կոմիտեյի վորևե քարտուղարին պաշտոնից հեռացնելիս):

3. կուսակցական որգանները պետք է ամեն կերպ բարելավեն թե խորհրդային և թե կոմյերիտական, պրոֆ-

միութենական ու կոոպերատիվային կազմակերպութեաների ղեկավարութեանը, վճռականորեն պայքար մղելով պրոլետարական հասարակայնութեանը վարչական հրամանատարութեան և մանր խնամակալութեան վերածելու դեմ կուսակցական կոմիտեաների կողմից: Վորչափով խորհուրդները, պրոֆմիութեաններն ու կոոպերացիան հանդիսանում են աշխատավորական լայն մասսաների հետ կուսակցութեան ունեցած կապի վճռական ապարատը, կուսակցական կազմակերպութեանները պետք է ամեն ջանք թափեն բարելավելու նրանց աշխատանքը, պայքարելով ամենավճռական կերպով պրոֆմիութենական, խորհրդային և կոոպերատիվային դեմոկրատիայի և մանավանդ ղեկավար որգանների ընտրականութեան խախտման դեմ, միաժամանակ համապատասխան ֆրակցիաների միջոցով հեռացնելով այդ կազմակերպութեանների ղեկավարութեանից բյուրոկրատական տարրերին, վորոնք կորցրել են մասսաների հոտառութեանը և կապը մասսաների հետ, համապատասխան որգաններ վերընտրելու միջոցով:

Չնայելով կուսակցութեան հսկայական աշխատանքին՝ մասսաների ակտիվութեանը և խորհուրդների աշխուժութեանը բարձրացնելու գործում, խորհուրդների, պրոֆմիութեանների ու կոոպերացիայի, վորպես իսկական կոլլեկտիվ որգանների ծավալումը դեռ չափազանց անբավարար է: Այդ որգանների փոխարինումը վերին խավերի համապատասխան աշխատողներով (խորհրդի պրեզիդիում, իսկ գյուղում շատ հաճախ միայն խորհրդի նախագահը կամ քարտուղարը, կոոպերացիայի վարչութեանը կամ վարչութեան նախագահը, համապատասխան պրոֆեսիոնալ միութեան պրեզիդիումը) դեռ ևս լայն գործածութեան ունի, մանավանդ գյուղում: Այդ պատճառով կուսակցութեան գլխավոր խնդիրը խորհրդային, պրոֆեսիոնալ ու կոոպերատիվային կազմակերպութեանների վերաբերմամբ հանդիսանում է

նրանց աշխատանքի այնպիսի կազմակերպումը, վորն աշխատավորության լայն մասսաներին իսկապես ներս քաշեր պետութիւնը կառավարելու գործում և, այդպիսով, ամբաստանաբար բանվոր դասակարգի ղեկավար դերը:

4. Սահմանել կոմունիստական բարձրագույն կրթական հաստատութիւններն ավարտողների համար գործնական աշխատանքի վոչ պակաս, քան յերկամյա պարտադիր ստաժ. այդ ստաժ ունենալը պետական և կուսակցական ապարատի վերին ողակներում աշխատանքի մեջ առանջ գնալու պայման համարել:

5. Խորհրդային բջիջները պետք է ակտիվ բազմիկներ դառնան պետական ապարատի բարելավման և բյուրոկրատիզմի ամեն տեսակի արտահայտութիւններին վոչնչացման մեջ, ի մի ձուլելով պետական ապարատում աշխատող կուսակցական անդամներին, կուսակցականութեան հիմունքների և կուսակցութեան անդամների վրա չիտոյիկական տարբերի կողմից ունեցած քայքայիչ ներգործութեանը հակահարված տալու հիմունքների վրա: Կոնֆերանցիան առաջարկում է Կենտրոնական Կոմիտեյին և ԲԳՏ-ԿՎՀ հրավիրել խորհրդային բջիջների հատուկ խորհրդակցութիւն՝ հաշիւ առնելու այդ բնագավառում տարվող աշխատանքի փորձը և մշակելու գործնական միջոցներ նրա հետագա ամբաստան համար:

VI

Կուսակցութեան XV համագումարի որից կուսակցութիւնն անկասկած աջողութիւններ է ունեցել իր դրած հարցի լուծման մեջ—բարձրացնել ներքևից ինքնաքննադատութեան հզոր ալիքը: Բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարի գործնական փորձը ցույց է տալիս, վոր կուսակցութեան տված ինքնաքննադատութեան լողունը «առանց ուշադրութիւն դարձնելու անձանց վրա», ներքևից մինչև

վեր և վերևից մինչև վար յեղող քննադատութեան լողունը դառնում է բյուրոկրատիզմի դեմ պայքարի վրճարական մի մեթոդ, հոգուտ ապարատի բարելավման և նրա զտման այնպիսի տարրերից, վորոնք միանում, հարմարվում են յերկրի կուլակային-կապիտալիստական տարրերի հետ: Առանձնապես ընդգծելով ինքնաքննադատութեան այնպիսի ձևերի կարևորութիւնը, վորպիսիք հրապարակ է բերել բանվորական մասսաների ձեռներեցութիւնը, վորպիսին և որինակ ֆարքիկաներում ու գործարաններում ներկայումս տեղի ունեցող սոցիալիստական մրցակցութիւնը, կոնֆերանցիան կուսակցական բոլոր կազմակերպութիւնների ուշադրութիւնն է հրավիրում այն քանի վրա, վոր ներքևից մինչև վերը կատարվող վերահսկողութեան և ինքնաքննադատութեան հետագա զարգացումը, ինքնաքննադատութեան ավելի ու ավելի խորացումն ու կենտրոնացումը ամբողջ հասարակական և առաջին հերթին՝ յերկրի տընտեսական ու կուլտուրական կյանքի հիմնական հարցերի վրա՝ հանդիսանում է բյուրոկրատիզմի դեմ կուսակցութեան և խորհուրդների կողմից տարվող ամբողջ պայքարի իսկական հաջողութեան ամենամեծ գրավականը:

VII

ՀԿԿ (Բ) ԱՆԴԱՄՆԵՐԻ ՈՒ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՏՄԱՆ ՈՒ ՍՏՈՒԳՄԱՆ ՄԱՍԻՆ.

1. ՀԿԿ (Բ) ամբողջ գոյութեան ընթացքում կուսակցութիւնը միայն մի անգամ է ընդհանուր գտում կիրառել 1921 թվին, ժողովրդական տնտեսութեան վերականգնման շրջանի սկզբին, քաղաքացիական պատերազմի վերջանալուց հետո, յերբ կուսակցութիւնը, դնելով իր առաջ «կուսակցութեան զտման խնդիրը վոչ-կոմունիստական տարրերից, ճշգրիտ հաշվառքի յենթարկելով ՀԿԿ (Բ) յուրաքան

չյուր անդամի ըստ իր պաշտոնում կատարած աշխատանքի, նաև վորպես ՀԿԿ (բ) անդամի», բավականաչափ ազատվեց իրեն խորթ և այլասերված տարրերից, ամրապնդեց կուսակցութան շարքերը և մի կարգ միջոցներ ձեռք առավ, վորոնք սահմանափակում են կուսակցութան մեջ վոչ-պրոլետարական տարրերի ընդունելությունը և ապահովում բանվոր դասակարգի ու գյուղացիությունից շարքերից կուսակցութան մեջ մտածների ավելի լանամքով կատարված ընտրությունը:

2. Այդ գտման որից անցել և 8 տարի, վորի ընթացքում կուսակցությունը մեծացել և քանակապես յերեք անգամ: Այդ ժամանակաշրջանում կուսակցությունից XIII և XIV համագումարների միջև կատարվեց վոչ-արտադրական բլիշներին անդամների ու թեկնածուների ստուգում, վորի նպատակն էր ամենից առաջ «մաքրել կուսակցությունը սոցիալապես խորթ ու այլասերված տարրերից, ինչպես և մաքրել կուսակցությունը վոչ-պրոլետարական կազմի այն տարրերից, վորոնք կուսակցությունից շարքերում յեղած ժամանակ չեն ցույց տվել իրենց վորպես կոմունիստներ՝ պետական, տնտեսական և այլ կազմակերպությունների աշխատանքի բարելավման գործում ու անմիջական կապ չեն ունեցել բանվորական և գյուղացիական մասսաների հետ» (XIII համագումարի բանաձևը): Ընդամենը ստուգվեց կուսակցական ամբողջ կազմի 25 տոկոսը և արտաքսվեց ստուգվածների մոտ 6 տոկոսը: 1926 թվին կատարվեց գյուղական բլիշների մասնակի ստուգում, իսկ 1927 թվին կուսակցության անդամների ու թեկնածուների համամիութենական մարդահամար (գրանցում): Այսպիսով ՀԿԿ (բ) իրագործեց կոմիստերնին իր պատկանելու պայմաններից մեկը, վորը պահանջում է.

«Խորը յերկրների կոմունիստական կուսակցությունները, վորտեղ կոմունիստները կատարում են լեգալ աշ-

խատանք, պետք է կատարեն կուսակցական կազմակերպությունների անձնական կազմի պարբերական գտումներ (վերադրանցումներ), վորպեսզի սխառմաբար մաքրվի կուսակցությունը անխուսափելիորեն ներս սողոսկած մանր-բուրժուական տարրերից»:

Բացի այդ, վերականգնման շրջանի ընթացքում կուսակցությունը սխառմաբար, որեցոր ստուգել է իր շարքերը վերահսկիչ հանձնաժողովների գործունեությունից միջոցով, պատասխանատվության յենթարկելով կուսակցության այն անդամներին, վորոնք խախտել են ծրագրերը կամ կուսակցական դիսցիպլինան, ինչպես և այլասերված ու խորթ տարրերին, ըստ վորում 1927 թվականից մինչև 1928 թ. հուլիսի 1-ը վերահսկիչ հանձնաժողովներն արտաքսել են, ապա կամովին հեռացել են կուսակցությունից և չեն ներկայացել վերադրանցման 260.144 անգամ և թեկնածու:

3. Յերկրի սոցիալիստական տնտեսության վերակառուցման շրջանում, շողկապված սոցիալիստական հարձակման հետ քաղաքի և գյուղի կապիտալիստական տարրերի վրա և դասակարգային պայքարի սրման հետ, կուսակցությունը պետք է առանձին խնամքով վերաքննի իր շարքերը նրա համար, վորպեսզի ուժեղացնի դիմադրությունը մանր-բուրժուական տարրերի ազդեցությանը, դարձնի կուսակցությունն ավելի միատարր, ավելի ռազմունակ՝ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման դժվարությունները հաղթահարելու գործում:

1928 թ. նոյեմբերյան պլենումի վորոշումը «ամենավճռական գտման մասին սոցիալապես խորթ, քճնություններ ներս սողոսկած, բյուրոկրատացած և այլասերված տարրերի մասին», — «տարրերի, վորոնք ոգտագործում են կառավարող կուսակցության իրենց անդամությունը՝ շահադիտական ու կարյերիստական նպատակների համար, բուրժուա-քաղ-

քենիական վերասերված տարրերի, վորոնք միացել-հարմար-վել են կուլակուլթյանը և նմաններին» — նույնպես նկատի ունի Կոմիտեներն կողմից ընդունած ՀԿԿ (բ) բոլոր անդամ-ների ու թեկնածուների պարբերական դոման (վերագրանց-ման) պահանջը՝ բարելավելու կուսակցական կազմակեր-պությունների սոցիալական կազմը, բարձրացնելու քաղա-քական ու բարոյական մակարդակը տեղերում և ընդհան-րապես ամբողջ կուսակցության մեջ՝ սոցիալիզմի համար մղվող պայքարի ղեկավարագույն շրջանում, ԽՍՀՄ ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական հիմնական վերակառուցման ժամանակաշրջանի սկզբին:

4. ՀԿԿ (բ) սոցիալական կազմի հիմնական բարելավ-ման և նրա մեջ պրոլետարական կորիզի ամրապնդման հետ գուզընթաց (44 տոկոս Լենինի մահվան ժամանակ և 62 տո-կոս առ 1-ն հուլիս, 1928 թ.), դրա հետ միասին և այն, վոր բանվորների թիվը կուսակցության մեջ այդ ժամենա-կամիջոցում աճել է ավելի, քան յերեք անգամ, աճել է նույնպես զգալի կերպով բանվորական բլիշների թիվն ու տեսակարար կշիռը, կուսակցության սոցիալական կազմը տակավին յետ է մնում այն պահանջներից, վոր ղնում են կուսակցության առաջ ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդիրները: Մինչդեռ պետական, տնտեսական, պրոֆմիութենական և նույնիսկ կուսակցական ապարատների գրեթե ըլոր ողակներում բյուրոկրատացած տարրերի գոյությունը, իսկ տեղ-տեղ, մանավանդ գյուղի ստորին ապարատում, բուրժուա-քաղ-քենիական վերասերման տարրերի գոյությունը, վորոնք միացել են կուլակների հետ և խեղաթյուրում են կուսակ-ցության դասակարգային գիծը, — դանդաղեցնում է քաղաքի և գյուղի պրոլետարական լավագույն տարրերի հոսանքը դեպի կուսակցությունը, թուլացնում է սոցիալիստական շինարարության թափը, յերբեմն անվստահություն է սեր-

մանում բանվորների և գյուղացիների լայն մասսաների մեջ դեպի կուսակցության և Խորհրդային Էշխանության միջոցառումները: Հարյուր հազարավոր պրոլետարների հետ միասին, վորոնք կազմում են Լենինյան կուսակցության ամուր հիմքը, կուսակցության մեջ ներս են թափանցել մանր-բուրժուական տարրեր, կենցաղային ապականության այդ կրողները, վորոնք կուսակցական շարքերի մեջ քայ-քայում են մտցնում իրենց սնձնական ու հասարակական կյանքի որինակով, արհամարում են բանվորների և աշխա-տավոր գյուղացիության հասարակական կարծիքը, մորթե-պաշտ ու կարյերիստ տարրեր, վորոնցից կուսակցությունը բավականաչափ չի զտվում վերահսկիչ հանձնաժողովների սխտեմատիկ ու ամենուրյա աշխատանքով:

Կուսակցության ներկա գտումը պետք է մաքրի ՀԿԿ (բ) շարքերը այդ տարրերից և դրանով ուժեղացնի մորիլիզացիոն պատրաստականությունը սոցիալիստական հարձակման գործում, ել ավելի պիտի ամրապնդի վստահու-թյունը դեպի կուսակցությունը և նրա հեղինակավորու-թյունը, նրա կողմը պիտի գրավի քաղաքի և գյուղի պրո-լետարական ու բատրակային նորանոր լսավեր:

5. Դնելով կուսակցության ընդհանուր գտման հարցը, անհրաժեշտ է նկատի առնել, վոր բանվոր դասակարգի կազմը վերջին տարիների ընթացքում բավականաչափ փոխ-վեց, վորի մասին անհրաժեշտ համարեց նախագրողացնել Վ. Ի. Լենինը 1921 թ. գտումից ախմիջապես հետո, յերբ նա գրում էր.

«Կասկածից դուրս է, վոր մեզ մոտ շարունակ բանվոր-ներ են համարվում այնպիսի անձինք, վորոնք, խոշոր ար-դյունագործության իմաստով, ամենափոքր լուրջ դպրոց անգամ չեն անցել: Շարունակ բանվորական կատեգորիայի մեջ են ընկնում ամենախակական մանր բուրժուաներ, վո-րոնք պատահաբար և ամենակարճ ժամանակով բանվորնե-

րի յեն վերածվել: Բոլոր խելացի սպիտակ-զվարդիականները միանգամայն վորձալի կերպով հաշվի յեն առնում այն հանգամանքը, վոր իբր մեր կուսակցութեան սրբութեամբական բնույթը իրոք նրան բոլորովին չի ապահովում մանրանտեսական տարրերի գերակշռութեան հարստութեամբ յուսից, և այն էլ ամենակարճ ժամանակով»:

Լենինը նույնպես անհրաժեշտ եր համարում նախագգուշացնել, վոր «չափազանց շատ ինտելիգենտ և կիսաինտելիգենտ տարրերի համար բանվորների մեջ մտնելը մեր պայմաններում վոչ մի դժվարութիւն չի ներկայացնում»:

Նա պնդում եր, թե անհրաժեշտ ե «վորոշել «բանվոր» հասկացողութիւնը այնպես, վորպեսզի այդ հասկացողութեան տակ մտնեյին միայն նրանք, վորոնք իսկապես իրենց կենսական դրութեամբ պետք ե յուրացնեյին սրբութեամբական հոգեբանութիւնը, իսկ այդ անհնարին ե՛ առանց յերկար տարիներ գործարանում լինելու, առանց վորեւ կողմնակի նպատակների, այլ միմիայն տնտեսական և սոցիալական կենցաղի ընդհանուր պայմաններով» (Լենին, 1922 թ.):

Համարելով կուսակցութեան ամենաառողջ մասը նրա գործարանային բջիջները, կուսակցութիւնն, այնուամենայնիւ, միմիայն վոչ-արտադրական բջիջները կամ գյուղական բջիջները չպիտի ստուգի, անհրաժեշտ ե հաշվի առնել, վոր կուսակցութեան գործարանային բջիջների մեջ ևս ներս են թափանցում, չնայելով շատ ավելի փոքր չափով, քան այլ բջիջները, տարրեր, վորոնք անընդունակ են կատարել կոմունիստական ավանգարդի դերը, տարրեր, վորոնք կապված են գյուղի կուլակային տնտեսութեան հետ և վորոնք հանդիսանում են մանր-բուրժուական ազդեցութեան տարածողները սրբութեամբի տարի վրա, տարրեր, վորոնք աշխատանքը գործարանում համարում են միմիայն իրենց անհատական տնտեսութեան հարստացման միջոց, մորթեպաշտ

տարրեր, վորոնք չեն մասնակցում աշխատանքային դիսցիպլինայի բարձրացմանը, տարրեր, վորոնք անտարբեր վերաբերմունք են ցույց տալիս դեպի այնպիսի հակահեղափոխական յերեւոյթները, վորպիսին ե որինակ անտիսեմիտիզմը, տարրեր, վորոնք վերջնականապես չեն խզել իրենց կապերը կրօնական ծեսերի հետ, և այլն:

Առանց ամբողջ կուսակցութեան գտման, այդ թվում նաև նրա արտադրական բջիջները, կուսակցութիւնը չի կարող իր շարքերը գրավել անկուսակցական զգալի սրբութեամբական ակտիվից լավագույն տարրերին, ամբացնելու համար կուսակցութեան սրբութեամբական հիմնական կորիզը: Առանց իր շարքերի այդպիսի գտման, միաժամանակ իր մեջ առնելով սիստեմաբար սրբութեամբական լավագույն տարրերին, Ֆարբիկա-գործարանային բջիջները չեն կարողանա իրագործել նոր ետապում մեծ ու բարդ խնդիրներ, վորոնք պահանջում են մաքսիմալ չափով միատարրութիւն, միասնութիւն, գիտակցականութիւն և սրբութեամբական լենինյան տոկոսութիւն:

6. Կուսակցութիւնն առանձին ուշադրութեամբ պիտի ստուգի գյուղական բջիջների կազմը, վճռականապես մաքրի նրանց նրա մեջ թափանցած դասակարգայնորեն խորթ կամ կուլակային տարրերի—առետրականների, բայերի և հողետրականների հետ միացած ու հարմարված տարրերից, կուսակցութեան այնպիսի անդամներից, վորոնք վարում են բատրակներին ու չքավորներին կուսակցութիւնից վանող քաղաքականութիւն, այնպիսի կուսակցականներից, վորոնք մասնակցութիւն չեն ցույց տալիս գյուղական տնտեսութեան սոցիալիստական վերակառուցման միջոցառումները կյանքի մեջ կիրառելու գործին, այն չինովելիական տարրերից, վորոնք չեն իրագործում կուսակցութեան դերեկտիվները չքավորութեան վրա հենվելու և գյուղացիութեան միջակ մասսաների հետ միութիւն կնքելու մասին, կուսակցութեան

այն անդամներին, վորոնց տնտեսական աճումն ու ապահովությունը ծածկել և նրանց աչքերից կոմմունիստական պրոպագանդի և գյուղի կազմակերպման խնդիրները, հեղափոխական որինականությունը հարանենգությամբ խախտողներին, իշխանությունն իրենց անձնական նպատակներին համար շահագործողներին:

Գյուղական բնիշներին միայն այս տեսակ զտումը, կապված, մի կողմից, դեպի ստուգումն ու զտումը գրավելու հետ բատրակային, չքավոր ու միջակ ակտիվին, լայն բացատրելով կուսակցության քաղաքականությունը գյուղացիության ընդարձակ մասսաներին առաջ, մյուս կողմից— զգուշավոր վերաբերմունքի հետ դեպի գյուղի իսկապես անձնվեր կոմմունիստական տարրերը, դեպի ակտիվիստները, քաղաքացիական կռիւ նախկին մասնակցողներին շրջանից դուրս յեկած և Կարմիր Բանակի դպրոցն անցած հասարակական աշխատողները, վորոնք գործնականում ոգնում են կուսակցության սոցիալիստական միջոցառումները գյուղում կիրարկելուն,— միմիայն այդպիսի զտումն ընդունակ է վերածելու գյուղական բնիշները կոմմունիստական կուսակցության հենակետերին՝ գյուղում, ամբապնդելու վատահոլությունը դեպի կուսակցությունը, գրավելու կուսակցության շարքերի մեջ կոմմունիստական լավագույն տարրերին, բատրակներին ու չքավորներին և առաջ շարժելու գյուղական տնտեսության կոլլեկտիվացումը:

7. Վոչ-արտադրական բնիշներին ստուգումը XIII համագումարից հետո ցույց տվեց ընդհանուր առմամբ, վոր նրանց սոցիալական կազմը բավականաչափ բարելավվել է: Վոչ-արտադրական բնիշներին կազմի մեջ կային՝ սոցիալական ծագմամբ բանվորներ—39,4 տոկոս, գյուղացիներ—36,7 տոկոս, ծառայողներ և ուրիշներ 23,9 տոկոս: Չնայելով վոչ-արտադրական բնիշները շարունակ լրացվում են պրոլետարական նոր խավերով, վորոնց առաջ է քաշում կուսակ-

ցությունը բանվորական միջավայրից, վոչ-արտադրական բնիշները հաճախ ամենից շատ են յենթակա վոչ-պրոլետարական տարրերի ազդեցությանը և նրանց շնորհիվ կորցնում իրենց մաքրությունը:

Լենինը բազմիցս մատնանշել է, վոր «կառավարական կուսակցության մեջ անխուսափելիորեն ձգտում են խծկվել կարեյերիստներ ու արկածախնդիրներ»: «Մեր մեջ են խծկվել տեղ-տեղ կարեյերիստներ, վորոնք կոչվել են կոմմունիստներ և խաբուսում են ձեզ, վորոնք մեր մեջ են մտել նրա համար վոր՝ կոմմունիստներն այժմ իշխանության գլուխ են կանգնած»... Լենինը խորհուրդ էր տալիս զտել կուսակցությունը այդպիսի «պրոկոլներին», «ավանտյուրիստներին», «կուսակցության ի ցույց մարդկանց յեղող ասդամներին», «նրանցից, վորոնք ցանկանում են «ոգտվել» կառավարական կուսակցության անդամների ունեցած դիրքից, վորոնք չեն ցանկանում կրել անձնագոհ աշխատանքի ծանրությունները հոգուտ կոմմունիզմի», «վորպեսզի կուսակցության մեջ մնան միայն դիտակից և կոմմունիզմին անկեղծորեն նվիրված մարդիկ», վորպեսզի կուսակցության մեջ մտնեն միմիայն «բանվորական կառավարությանը բարեխղճորեն նվիրված անձինք, միայն ազնիվ աշխատողները, միայն ճնշված մասսաների իսկական ներկայացուցիչները կապիտալիզմի ժամանակ» (Լենին): Հենց վոչ-արտադրական բնիշներին մեջ հնարավոր է լայնորեն ոգտագործել կուսակցական դրությունը շահաչիտական նպատակներով — վատնումներ, պրոտեկցիոնիզմ, կարեյերիզմ, բյուրոկրատական վերաբերմունք դեպի մասսաները. հենց այստեղ է, վոր տեղի յեն ունենում մասսաներին վանող «կենցաղային ապականության» փաստեր. հենց այս բնիշների մեջ սոցիալապես խորթ, բյուրոկրատացած, ներս խրձկված ու ալլասերված տարրերը ամենամեծ վնասն են հասցնում կուսակցության, հենց այդ անարտադրական բնիշներին

մեջ կան ամենամեծ քանակութեամբ մյուս կուսակցութիւններէից դուրս յեւածներ, վորոնք չեն մերվել բոլշեւիկյան կուսակցութեան մեջ և պահպանել են իդէոլոգիայակա խորթ հայացքներ:

Մինչդեռ այդ բլիշներէ կազմից, նրանց աշխատանքի վորակից, նրանց կուսակցական սոկուճութեան աստիճանից, մասսաների հետ ունեցած նրանց կազմից և կախված կուսակցական և անկուսակցական բանվորներէ և գյուղացիներէ լայն մասսաների վստահութիւնը դեպի խորհրդային պետութեան, տնտեսական որգաններէ, պրոֆմիութիւններէ, կուսակցութեան ապարատը և նրանց կոմմունիստական աշխատանքի աշողութիւնը:

Իրա համար ել առանձնապէս խնամքով պիտի կատարվի զտուճը բոլոր վոչ-կոմմունիստական, այլասերված, խորթ, բյուրոկրատացած, ներս խծկված, մորթեպաշտ տարբերից, վորոնք չինոքսիկական վերաբերմունք ունեն դեպի իրենց պարտականութիւնները:

Միտժամանակ անհրաժեշտ և առանձին խնամկոտ վերաբերմունք ցույց տալ դեպի առաջ քաշված բանվորն ու բանվորուհիները, հաշվի առնելով այն հանգամանքը, վոր նրանք սկզբի ժամանակներում դժվարութեամբ են յուրացնում իրենց համար անսովոր աշխատանքի նոր ձևերը, և անարտադրական բլիշներէ զտման հետ գոզգոնթաց տրնտեսական, կուսակցական ու վարչական ապարատի մեջ ավելի յեռանդուն ու մտածված կերպով պետք և առաջ քաշել բանվորներին ու բանվորուհիներին:

8. Կուսակցութեան շարքերի ներկա ստուգումն ու զտումը այսպիսով պետք և կուսակցութիւնը դարձնեն ավելի միատարր, ազատեն նրան այն ամենից, ինչ կոմմունիստական չէ: Ըստինքյան հասկանալի յե, վոր այդպիսի ստուգումը կապված և ահագին դժվարութիւններէ հետ և պետք և կատարվի շատ ավելի խնամքով, զտման և ստուգ-

ման խնդիրներէ բազմակողմանի բացատրութիւնից հետո՝ ինչպէս կուսակցութեան բոլոր անդամներին ու թեկնածուներին, այնպէս և անկուսակցական բանվորներին ու գյուղացիներին: Առաջադրելով կուսակցութեան յուրաքանչյուր անդամին ու թեկնածուին վորոշակի պահանջներ բարոյական մակարդակի, մասսաների հետ ունեցած կապի, կուսակցութեան աշխատանքի, սոցիալիզմի շինարարութեան մեջ ունեցած ակտիվ մասնակցութեան վերաբերմամբ և այլն, կուսակցութիւնը նախադգուշացնում և, վոր ստուգումը չպետք և վերածել մանր ու բժախնդիր պրպտումների կուսակցականների անձնական կյանքի մեջ, չպետք և ստուգումն այլանդակել և պետք և անց կացնել այն՝ կոմմունիստական կուսակցութեան դասակարգային խնդիրներէ տեսանկյան տակ:

Չտուճն անողոք կերպով պետք և դուրս շարտի կուսակցութեան շարքերից բոլոր նրա համար խորթ, նրա աշողութիւններէ համար վնասակար, նրա պայքարին անտարբեր տարբերին, անուղղելի բյուրոկրատներին, ներս խծկվածներին, դասակարգային թշնամու հետ կապվածների ու նրան ոգնողներին, վորպէս սեփականատեր տնտեսապէս սարքվելու շնորհիվ կուսակցութիւնից տոկվածներին, անտիսեմիտներին, կրոնական պաշտամունքի գաղտնի կողմնակիցներին, մերկացնելով գաղտնի տրոցկիստներին, մյասնիկովյաններին, դեցիստներին և այլ հակակուսակցական խմբակների կողմնակիցներին և մաքրելով նրանցից կուսակցութիւնը: Սակայն զտումը միտժամանակ պիտի ամրացնի կազմակերպութեան աշխատանքը, ստուգի բլիշ աշխատանքը, ստեղծի ավելի ընկերական վերաբերմունք կուսակցութեան անդամների միջև, բարձրացնի յուրաքանչյուրի պատասխանատվութեան զգացումը ամբողջ կուսակցութեան քաղաքականութեան և վիճակի համար, զարկ տա քաղաքական գիտելիքների մակարդակի բարձրացմանը,

ուժեղացնի պայքարը բյուրոկրատիզմի դեմ, բարձրացնի կազմակերպութեան բոլոր անդամները ակտիվութեամբ, ուժեղացնի նրանց կապը բանվորներին ու գյուղացիներին մասսաների հետ, ուժեղացնի ակտիվ մասնակցութեամբ գյուղի սոցիալիստական վերակառուցման մեջ, արտադրութեան և կառավարչութեան ռացիոնալացման մեջ, աշխատանքային զիսցիպլինայի բարձրացման մեջ, ամեն տեսակի ավելորդութեաններին վտարման մեջ և այլն: Ստուգումն, այդպիսով, չպիտի կրի՝ վնջ նեղ-հարցաքննական, և վնջ ել դատական-հետախուզական բնույթ: Այն դեպքերում, յերբ կուսակցութեան անդամը բոլոր այլ նշաններով պիտանի յե կուսակցութեան անդամ լինելու, սակայն նրա քաղաքական գրադիտութեան մակարդակը բավարար չէ, — դա վոչ մի դեպքում հիմք չպիտի ծառայի նրան արտաքսելու համար, այլ պետք է հաշիւ առնելի ստեղծելու համար այնպիսի պայմաններ, վորոնք ոգնեյին կուսակցութեան այդ անդամին ուղղելու իր պակասը: Հայտաբերելով կուսակցութեան յուրաքանչյուր անդամի և թեկնածուի պիտանիութեանը կուսակցական պարտավորութեանները իրագործման նկատմամբ, ոգնելով ուղղել նրանց սխալներն ու թերութեանները, թողնելով կուսակցութեան շարքերում կոմունիզմին նվիրված բոլոր տարրերին, ստուգումը պետք է զուգընթացաբար սահմանի, թե վնջափոխ ճիշտ է իրականացվում տվյալ բջի դեկալարութեանը և թե վորչափով կուսակցականների սխալներն ու թերութեանները կապված են այդ դեկալարութեան հետ:

9. Ստուգումն ու գտումը կարող են հաջող լինել միայն այն դեպքում, յեթե նրանց ժամանակ քննադատութեանն ու ինքնաքննադատութեանն ամենալայն կերպով ծավալվեն տեղական և ընդհանուր մամուլում, պատի թերթում, կուսակցական ժողովներում և դռնբաց ժողովներում՝ բանվորների ու գյուղացիների մասնակցութեամբ: Անհրա-

ժեշտ է միջոցներ ձեռք առնել, վորպեսզի ստուգմանն ու գտմանը մասնակցին նաև անկուսակցականները: Անհրաժեշտ է դեկալարվել Լենինի հրահանգով, վորի մեջ գրել է.

«Կան տեղեր, ուր գտում են կուսակցութեանը, հենվելով գլխավորապես փորձառութեան վրա, անկուսակցական բանվորների ցուցմունքների վրա, դեկալարվելով նրանց ցուցմունքներով, հաշիւ առնելով անկուսակցական պրոլետարական մասսայի ներկայացուցիչներին: Ահա այդ բանը ամենաարժեքավոր, ամենակարևորն է: Յեթե մեզ իրոք հաջողվի այդ ձևով գտել կուսակցութեանը վերելից մինչև վար, «ուշադրութեան չդարձնելով անձնավորութեանների վրա», հեղափոխութեան նվաճումը իրոք խոշոր կլինի»:

(Լենին, հատ. XVIII, մասն I, էջ 360):

«Իհարկե, մասսայի վնջ բոլոր ցուցմունքներին յենթարկվում ենք մենք, վորովհետև մասսան ևս յերբեմն յենթակա յե լինում բոլորովին վոչ-առաջավոր տրամադրութեանների, մանավանդ բացառիկ հոգնածութեան, չափից դուրս ծանրութեաններից ու չարչարանքներից առաջացած չափազանց հոգնածութեան տարիներին: Սակայն մարդկանց գնահատելիս, դեպի «ներս խճկվածները», «կոմիսարացածները», «բյուրոկրատացածները» հայտաբերած բացասական վերաբերմունքի մեջ անկուսակցական պրոլետարական մասսայի ցուցմունքները, իսկ շատ դեպքերում անկուսակցական գյուղացիական մասսայի ցուցմունքներն ևս ծայր աստիճան արժեքավոր են: Աշխատավոր մասսան ամենամեծ հոտառութեամբ կարողանում է վորոշել այն տարբերութեանը, վոր գոյութեանն ունի ազնիվ ու անձնվեր կոմունիստների ու այնպիսիների միջև, վորոնք զզվանք են առաջացնում այն մարդու մեջ, վորն իր ճակտի քրտինքով է հաց վաստակում, վորը չունի վոչ մի արտոնութեան և դեպի մեծերը տանող վոչ մի ուղի»: Լենին:

«Ձտել կուսակցութիւնը, հաշվի առնելով անկուսակցական աշխատավորութեան ցուցմունքները, — մեծ դործ ե, նա կտա մեզ լուրջ արդյունքներ: Նա կուսակցութիւնը կդարձնի դասակարգի շատ ավելի ուժեղ ավանգարդը, քան առաջ, նրան կդարձնի մի ավանգարդ՝ ավելի ամուր կապիած դասակարգի հետ, ավելի ընդունակ՝ տանելու նրան դեպի հալթանակ բազմաթիւ դժվարութիւնների ու վտանգների միջից»: (Լենին, հատ. XVIII, մասն I, էջ 360):

Սակայն, լայն կերպով մասնակից դարձնելով կուսակցութեան շարքերի ստուգմանը անկուսակցական բանվորներին ու գյուղացիներին, անհրաժեշտ է՝ —

1) վոչ մի դեպքում չվերածել դոնրաց ժողովները կուսակցութիւնը դեմագոգիորեն վարկաբեկելու հրապարակի՝ պրոլետարիատին խորթ տարրերի կողմից և թուշլ չտալ այդպիսի ժողովներին վոչ-աշխատավորական կամ դասակարգայնորեն խորթ տարրերին:

2) վոչ մի դեպքում քարշ չգալ անկուսակցական մասսայի պոչից այնտեղ, յերբ խոսքը վերաբերում է այս կամ այն կուսակցականի կուսակցական գծի ճշտութիւնը վորոշելուն:

3) ոգտագործել նման դոնրաց ժողովները՝ պարզաբանելու համար կուսակցութեան գիծը և կուսակցութեան շարքերը զրավելու համար լավագուշն տարրերին անկուսակցական բանվորներից, բատրակներից ու չքավորներից:

Բոլոր այն ցուցումները, վոր անհրաժեշտ է զգուշ ու խնամքով մոտենալ կոմունիստական արժեքավոր տարրերին կուսակցութեան մեջ, վոր անհրաժեշտ է սկզբունքային մոտեցում ունենալ զտմանը և զտման ու ստուգման միանգամայն ընկերական միջնորոտ ստեղծել, առանձնա-

պես վերաբերում են դոնրաց ժողովներին, վորոնց մասնակցում են նաև անկուսակցականները:

10. Առանձնապես կարևոր աշխատանք է ընկնում կուսակցութեան շարքերի զտման ժամանակ կուսակցական մամուլի վրա: Անհրաժեշտ է հոգ տանել, վորպեսզի հենց սկզբից զտման խնդիրները սկզբունքային տեսակետից մանրամասն լուսաբանութեան յենթարկվեն, վորպեսզի շարունակ զտման հարցերի քննարկութեան քաղաքական վորոշ մակարդակը բարձր պահվի, վորպեսզի կուսակցութեան շարքերից ամեն մի անպետք բան անողոք կերպով դուրս շարտելու փաստերի լուսաբանութեան հետ զուգընթաց մամուլում բավական ընդարձակ կերպով մատնանշված լինի այն ամենը, ինչ արժեքավոր ու դրական է ստուգվող կազմակերպութեան աշխատանքի մեջ: Մտրակելով բոլոր անպետք տարրերին, մամուլը վոչ մի դեպքում չպիտի անաբեկի ու զրգոի ընկերներին, վորոնք այս կամ այն սխալը կատարել են պատահմամբ, իրենց անփորձութեան շնորհիվ: Տեղական վերահսկիչ հանձնաժողովները պետք է ղեկավարեն մամուլի այն բոլոր լուսաբանութիւնները, վոր յերեվան կրերի ստուգումը, թուշլ չտալով արատավորել կուսակցութիւնը նրա առանձին անդամների անպիտանութեան ու հանցանքների պատճառով:

11. կուսակցութիւնը պետք է մեծ ուշադրութիւն դարձնի զտման համար կատարվող ամենաուշադիր նախապատրաստութեան վրա այնպես, վորպեսզի բուն զտման ու ստուգման պրոցեսը տեղի ունենա ամենակարճ ժամանակամիջոցում: Դրա համար անհրաժեշտ է ամենաուշադիր նախապատրաստական աշխատանք, զտման խնդիրների լուսաբանութիւն մամուլում և ժողովներում, բացատրութիւն այն պահանջների, վոր առաջագրում է կուսակցութիւնը զտման ժամանակ կուսակցութեան յուրաքանչյուր անդամին և թեկնածուին, վոչ միայն ամբողջ կուսակցա-

կան մասսային, այլ և այն անկուսակցականներին, վորոնք ոգնութեան կզան կուսակցութեանը՝ նրա շարքերի զտման և ստուգման ժամանակ:

Հաշվի առնելով նախկին ստուգումների ժամանակ տեղի ունեցած սխալները, ինչպես և այն, վոր ստուգման պիտի յենթարկվի կուսակցութեան մոտ 1.500.000 անդամ ու թեկնածու, ցրված հսկայական տերրիտորիայում և աշխատանքի ամենատարբեր պայմաններում, կուսակցութեանը պետք է առանձին ուշադրութեամբ նախապատրաստվի այդ ստուգմանը: Կուսակցութեանը բացառիկ ուշադրութեան է դարձնում ստուգիչ հանձնաժողովների կազմի վրա, վորի մեջ անհրաժեշտ է մտցնել հին բոլշեկյան՝ վարդաօրայից ամենատոկուն ու անբիժ կուսակցականների հետ միատեղ այնպիսի ընկերների, վորոնք մտել են կուսակցութեան մեջ 1917 թվին և քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում. կուսակցութեանն ուշադրութեան է դարձնում այդ հանձնաժողովների ամենատոկուն ու պրոլետարական կազմի ապահովութեան վրա, ըստ վորում՝ այդ ստուգիչ հանձնաժողովների կազմը պետք է նախորդ լայն կերպով հայտնի լինի բանվորական մասսաներին, վորպեսզի կուսակցութեան բանվոր անդամները կարողանան իր ժամանակին ուղղել այդ ստուգիչ հանձնաժողովների կազմն այնտեղ, վորտեղ նրանք կազմված կլինեն վոչ-բավարար կերպով: Այդ հանձնաժողովները պետք է ուշի ուշով պատրաստվեն աշխատանքի, ճշտեն ստուգման խնդիրները յուրաքանչյուր տվյալ բջիջում, նայելով թե՛ այդ բջիջն ինչ կազմ, աշխատանքի ինչ պայմաններ և զարգացման ինչ մակարդակ ունի, և այլն:

12. Ներկա ստուգումը միայն այն ղեպքում զերծ կլինի շատ սխալներից, յեթե կուսակցութեանն իր յուրաքանչյուր անդամին ու թեկնածուին մոտենա ուշադրութեամբ, յեթե արատավորով մեղադրանքները մեծ խնամքով ստուգ-

վեն, յեթե ստուգիչ հանձնաժողովները կարողանան հաղթահարել անձնական հաշիվները, խմբակային պայքարը ստուգման ժամանակ, յեթե նրանք կարողանան ջոկել խառնաշփոթութեան, դարանակալութեան, դիտակցական վարկաբեկման տարրերը, յեթե ստուգումը կատարվի վորոշ սկզբունքային մակարդակի վրա, խուսափելով մանր-մանր բամբասանքներից, մոտեցման չորութեանց, շարունից: Առանձնապես կուսակցութեանն անհրաժեշտ է համարում նախազգուշացնել ձևական վերաբերմունքի դեմ դեպի ստուգվողները: Ստուգիչ հանձնաժողովները պարտավոր են հաշվի առնել կուսակցութեան անդամների ու թեկնածուների աշխատանքի բոլոր առանձնահատկութեանները արտադրութեան ու հիմնարկութեան մեջ, կուսակցականների կյանքի կենցաղային ու նյութական պայմանները, ազգային առանձնահատկութեանները, հիվանդ ընկերների, կանանց, գյուղատնտեսական բանվորների, գյուղացիների, յերիասարգութեան աշխատանքի առանձին պայմանները և այլն: ԿՎՀ պետք է մշակի ամենամանրամասն ղեկավար ցուցմունքներ տեղական Վերահսկիչ Հանձնաժողովների համար, վորպեսզի նրանք կարողանան մի շարք սխալների առաջն առնել: ԿՎՀ պետք է շարունակ հետի ստուգման ընթացքին և ուղղի այս կամ այն սխալները տեղական ՎՀ և կամ առանձին ստուգիչ հանձնաժողովների աշխատանքում:

13. Յենելով այս նկատառումներից, կենտկոմի և ԿՎՀ միացյալ պլենումը վորոշում է.

1) Կատարել կուսակցութեան ընդհանուր դոտում՝ պայմանով, վոր կուսակցական շարքերի ստուգումն ավարտվի մինչև ՀԿԿ (բ) XVI համագումարը: Կուսակցական բջիջների առանձին կատեգորիաների (գյուղական, արտադրական, ուսանողների և այլն) ստուգման որացուցցային ժամկետները պետք է նշանակվեն, հաշվի առնելով նրանց աշխատանքի առանձնահատկութեանները (դաշտային կարևոր

աշխատանքների միջև ընկած ժամանակամիջոցում գյուղական ըջիջների համար, վոչ քննությունների ժամանակ՝ բարձրագույն դպրոցական հաստատություններում և այլն): Որացուցցային այդ ժամկետերը պետք է նշանակի յուրաքանչյուր առանձին կազմակերպություն.

2) Հանձնարարել կՎՀ՝ մշակել ամենամանրամասն դեկավար ցուցմունքներ տեղական վերահսկիչ Հանձնաժողովների համար ստուգիչ հանձնաժողովների ընտրության կարգի մասին; ստուգումն ու գտումը կատարելու, ստուգիչ հանձնաժողովների աշատանքի փորձը հաշվի առնելու և նրանց ղեկավարելու կարգի մասին. հանձնարարել կՎՀ՝ մշակել տեղական ստուգիչ և վերաստուգիչ հանձնաժողովների վճիռների դեմ բողոք ներկայացնելու կարգը, ապահովելով ստուգիչ հանձնաժողովների խնամկոտ ընտրությունը և նրանց փրա ունեցած մշտական ղեկավարությունը կՎՀ և տեղերի (հանրապետական, յերկրային, մարզային) վերահսկիչ հանձնաժողովների կողմից.

3) Կուսակցության գտումը կատարել դոնբաց՝ անկուսակցական բանվորների և գյուղի բատրակային-չքավորմիջակ մասսաների առաջ.

4) Լայն նախապատրաստական կամպանիա մղել թե մամուլում և թե կուսակցական ժողովներում, ծանոթացնելով կուսակցության բոլոր անդամներին ու թեկնածուներին, ինչպես և անկուսակցական բանվորներին ու գյուղացիներին գտման ու ստուգման խնդիրներին հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ.
1. Ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանը	3
2. Գյուղական տնտեսության վերելքի ուղիները և միջակի հարկային թեթևացումը	14
3. Բյուրոկրատիզմի դեմ տարվող պայքարի արդյունքներն ու մերձակա խնդիրները	42
4. ՀԿԿ (ք) անդամների և թեկնածուների գտման և ստուգման մասին	71

«Ձ Ա Կ Կ Ն Ի Գ Ա»

Թիֆլիս, Կոմիտասերների փողոց, 5.

ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀԵՍՏՆԵՐԸ.

Թիֆլիս—Ձակինիդա, Ռուսթավելու-փող. 24, հեռախոս 22—30.
ՄՈՍԿՎԱ.—Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. Պետերբուրգի սեկտոր, Ստարոպանսկի, 5.
ԲՍՊՈՒ.—Ազգիք. 28 ապրիլի փողոց, Կենտրոնական մագազին.
ՅԵՐԵՎԱՆ.—Հայաստանի Խ. Ս. Հ. Պետերբուրգ, Արվյանի փողոց, 10.

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԻՆ

1. ԲՈՒԽՍՐԻՆ Ն.—Չինական հեղափոխության պրոբլեմները. 104 էջ, գինը 40 կ.:
2. ԳՈՐԵՎ Բ. Ի.—Սոցիալիզմի հանրամատչելի պատմությունը Արևմուտքում և Ռուսաստանում. 160 էջ, գինը 1 ո. 50 կ.:
3. ԴԱՆՅԻԳ ՅԵ.—Պիոները և գեղջկուհին. 22 էջ, գինը 20 կ.:
4. ՅԵՐՁՆԿՅԱՆ ԱՐԱՄՍՅԻՍ.—Աշխատավորության դատարանին. 66 էջ, գինը 65 կ.:
5. ԻՈՆՈՎ Պ.—Ինչ է աջ թեքումը. 61 էջ, գ. 20 կ.:
6. ԽԱՆՈՅԱՆ Ս.—Բողոքան Կոունյան. 66 էջ, գինը 45 կ.:
7. ԿԱՐԻՆՅԱՆ Ա.—Դաշնակցությունը փաստերի դեմ. 88 էջ, գինը 60 կ.:
8. ԿԱՍՅԱՆ Ս.—Սպեցիֆիկները և սպեցիֆիզմը. 188 էջ, գինը 1 ո. 50 կ.:
9. ՀԱԿՈՒՅԱՆ ՀԱԿՈՒ.—Ագիտատորի հուշերից (պատմվածքներ հեղափոխականների կյանքից). 108 էջ,

գինը 1 ո., հեղինակի պատկերով՝ առանձին թղթի վրա:

Բովանդակություն.—1) Հեղանակի կողմից, 2) Կազմակերպվեցինք, 3) 102-րդ հոգվածը կամ Միխայի Նամակը, 4) Ջերմոցի վարունգը, 5) Համոյի ատամները, 6) Ս. Սպանդարյանը խմբագիր, 7) 1905 թիվը Թիֆլիսում, 8) Վլաստը, 9) Կաշմարը, 10) Քընթոա-Հորսը, 11) Յերկորդ Պետական Դուսայի անդամը:

Հեղինակը այդ գրքում գեղարվեստական ձևով տալիս է մի շարք նկարագրություններ պողպտիայի շրջանից. գրքի լիզուն մատչելի յե մասսայական ընթերցանություն համար և այդ գրքի գոյությունը բանվորական գրադարաններում անհրաժեշտ է:

10. ՂԱՐԱՋՅԱՆ Գ. (Ս. Տ. Արկոմեդ).—Հայ անդրանիկ հեղափոխական խմբակը Անդրկովկասում. 72 էջ, գինը 60 կ.:

11. ՄԵԼԻՔ Ա.—Փիլիսոփայական Մատերիալիզմ. 112 էջ, գինը 1 ո. 25 կ.:

12. ՄՈՆՈՍՈՎ Ս.—Հեղափոխական շարժումները պատմությունը. թարգմանեց Հ. Ս ա ո ի կ յ ա ն, 110 էջ, գինը 1 ո. 40 կ.:

13. ՋՈՆ-ՌԻԴ—10 Որ, վոր ցնցեցին աշխարհը. 94 էջ, գինը 20 կ. (Կրճատ-հանրամատչելի հրատարակություն):

14. ՍԱՐՈԿԻՆ Վ.—Մեծ Հոկտեմբերը (գրույց պիոներներին հետ). 36 էջ, գինը 10 կ.:

15. ՄՆԵԳԻՐԵՎ Վ.—Կովկասյան Կարմրադրոշ բանակը. 72 էջ, գինը 29 կ.:

16. ՍՏԱԼԻՆ Ի. Վ.—Լենինիզմի հարցերի առթիվ. 84 էջ, գինը 30 կ.:

17. ՍՏԱԼԻՆ Ի. Վ.—Զրույց ամերիկյան առաջին բանվորական պատվիրակության հետ. 80 էջ, գ. 25 կ.:

18. ՎՈՂՈՍԵՎԻԶ Վ. Համամիութենական կոմմունիստական կուսակցութեան (բ) համառոտ պատմութիւն. 237 էջ, գինը 1 ու. 20 կ.:

19. ՍՈՒՐԵՆ Ե.—Ձղջացող հայ ինտելիգենցիան. 64 էջ, գինը 25 կ.:

20. ՏՈՎՍՏՈՒԽԱ ԻՎ.— Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալին (համառոտ կենսագրութիւն), Ստալինի նկարով՝ առանձին թղթի վրա. 16 էջ, գինը 12 կ.:

21. ՄԿՈՏՏ-ՏԱԳԳԱՐՏ Զ. Ռադիո՝ սկսնակներէ համար. 67 էջ, 12 նկարներով և սխեմաներով, գ. 75 կ.:

ԿՈՊՊԵՐԱՏԻՎԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԱՆԻՆ Մ. ՅԵ.— Սպառողական ընկերութիւններէ կազմակերպումն ու գործնականը. 244 էջ, գինը 2 ու. 30 կ.:

2. ԱՆԻՆ Մ. ՅԵ.— Ապրանքների գնահատումը (կալիուլյացիան) սպառողական ընկերութիւններում. 34 էջ, գինը 25 կ.:

3. Հրահանգ գործակատարին. 20 էջ, գինը 15 կ.:

4. ՅԵՐԻՅՅԱՆ Խ.— Կաթնատնտեսութեան գործնական ձեռնարկ. 172 էջ, գինը 1 ու. 50 կ.:

Գիրքը հանդիսանում է հանրամատչելի ձեռնարկ՝ գյուղական կաթնատնտեսութեան համար և պարունակում է մի շարք նկարներ, վորոնք դյուրացնում են բնագրի ըմբռնումը:

5. ՈՍՏՐՈՎՍԿԱՅԱ Ն.— Ինչի՞ համար է պետք կոոպերացիան գեղջկուհիներին. 46 էջ, գինը 25 կ.:

6. ՉԱՅԱՆՈՎ Ա.— Կոոպերացիայի համառոտ դասընթացը. 88 էջ, գինը 40 կ.:

ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ՅԵՎ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԲԱՐՅՅՈՒՄՍ ԱՆՐԻ.— Դահլճներ (Սպիտակ տերրորը Բաղկաններում). ուսերեկից թարգմանեց Հ. Ս ա ո ի կ յ ա ն. 248 էջ, գինը 1 ու. 20 կ.:

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն.— 1) Յեվրոպայի դժոխքում, 2) Մեծագույն քաղաքական պրոցեսը, 3) Բալկանյան ժողովուրդներին:

2. ԶՈՒՐԱՅԱՆ Մ. Ապրանքը, փոքրիկ պատմվածք, վորը ուրուագծում է գեղջկուհու պայքարը հին կենցաղի դեմ: Լեզվի պարզութիւնը և նյութի այժմեականութիւնը պարտավորեցնում են ամեն մի գրադարանի ունենալ սույն գրքույկը. 36 էջ, գինը 15 կ.:

3. ԻՍԱՀԱԿՅԱՆ ԱՎԵՏԻՔ. Լիլիթ, ժողովածու արեւիկայան լեզենդների. գեղարվեստական հրատարակութիւն, հեղինակի պատկերով՝ առանձին թերթի վրա. 214 էջ, գինը 1 ու.:

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն.— 1) Հառաջարան, 2) Լիլիթ, 3) Սաադիի վերջին գարունը, 4) Լի-Թայի-Պո, 5) Բուրգհան թռչուն, 6) Ոմար Խայամի վեճը աստծու հետ, 7) Շիդհար, 8) Չինգիզ-խան:

4. ՀԱԿՈՒՅԱՆ ՀԱԿՈՒՔ.— Ագիտատորի հուշերից (պատմվածքներ հեղափոխականների կյանքից). 108 էջ, գինը 1 ու., հեղինակի պատկերով՝ առանձին թղթի վրա:

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն.— 1) Հեղինակի կողմից, 2) Կազմակերպիչները, 3) 102-րդ հողվածը կամ Միլիայի նամակը, 4) Ջերմոցի վարունգը, 5) Համոյի ատամները, 6) Ս. Սպանդարյանը խմբագիր, 7) 1905 թ. թիֆլիսում, 8) Վլաստը, 9) Կաշմարը, 10) Քնթոս-Հորսը, 11) Յերկրորդ Պետական Դումայի անդամը:

Հեղինակը այդ գրքում գեղարվեստական ձևով տալիս է մի շարք նկարագրություններ պոբլովիայի շրջանից. գրքի լեզուն մատչելի յե մասսայական ընթերցանության համար և այդ գրքի գոյությունը բանվորական գրագարաններում անհրաժեշտ է:

5. ՉԱՐԵՆՅ ՅԵՂԻՇԵ. — Ժողովածու պոեմների, հեղինակի պատկերով առանձին թղթի վրա, գործ՝ նկարիչ Մ. Սարյանի. 189 էջ, գինը 2 ռ.: Գեղարվեստական հրատարակություն:

Այս ժողովածուի մեջ գետեղված են Չարենցի ավելի ակտուալ գործերը, վորոնք նվիրված են Հոկտեմբերյան հեղափոխությանը:

6. ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ. — Հիշողություններ Յերևանի ուղղիչ տնից. 288 էջ, գինը 1 ռ. 60 կ.:

Ժամանակակից հայ գրականության մեջ ուշագրավ գեղարվեստական աշխատություն է, վորը կենդանի ու հետաքրքիր նկարագրություններով տալիս է խորհրդային ուղղիչ տան կենցաղը, վոր հետապնդում է վոչ թե պատիժ, այլ ուղղելու նպատակը:

7. ՊԵՏՐՈՍՅԱՆ Մ. — Պատմվածքներ. 26 էջ, գինը 20 կ.:

8. ԶՈՆ-ՈՒԻԴ. — 10 որ, վոր ցնցեցին աշխարհը. 94 էջ, գինը 20 կ. (կրճատ-հանրամատչելի հրատարակություն):

9) ՄԱՐՈՒԿԻՆ Վ. — Մեծ Հոկտեմբերը (գրույց պիոներների հետ). 36 էջ, գինը 10 կ.:

10. ՍՈՒՐԵՆ Ե. — Գրական ֆրոնտում. 210 էջ, գինը 1 ռ. 50 կ.:

Սույն գրքում գետեղված են մի շարք քննադատական հոգվածներ՝ նվիրած ժամանակակից հայ գրականությանը: Ժողովածուն հանդիսանում է անհրա-

ժեշտ ձեռնարկ՝ ժամանակակից գրական ու թատրոնական խնդիրները լուսաբանելու տեսակետից:

11. Հ. Ս. Ս. Հանրապ. քարտեզը. գինը 30 կ.:
Կլսագնդերի քարտեզները, մեծ թերթերի վրա. 1 ռ. 75 կ., փոքր թերթի վրա՝ 60 կ.:

Հիշյալ գրքերը և աշխարհագրական քարտերը պահանջելու դեպքում՝ դիմել հետեյալ հասցեյով. Թիֆլիս, Կոմիտեերնի փողոց, 5. «Զակկնիգա»:



ՀՀ Ազգային գրադարան



NL0179697

